ԱՐԵՎՄՈՒՏՔ–ՎՐԱՍՏԱՆ ԽՈՐԸ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ 9-ԱՄՍՅԱ ՓՈՒԼԸ. ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԵՏՆԱՊԱՏԿԵՐԸ

Վահե Դ. Սարգսյան

Սեղմագիր

Աշխատանքում ներկայացված են 2024 թ. ապրիլ-հոկտեմբեր (մինչ հոկտեմբերի 26-ին կայացած խորհրդարանական ընտրությունները) ժամանակահատվածում Վրաստանում և վերջինիս շուրջ տեղի ունեցած զարգացումները՝ «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրինագծի վերաշրջանառումը, ընդունումը, դրանով պայմանավորված նախընտրական գործընթացներն ու Վրաստանի շուրջ տեղի ունեցած բարդ զարգացումները: Նշված ինն ամիսներին տեղի ունեցած գործընթացները միայն առաջին հայացքից էին վերաբերում նշված օրինագծին, ապա՝ օրենքին: Իրականում այդ բարդագույն պատմափուլը ճակատագրական նշանակություն ունեցավ թե՛ Վրաստանի ինքնիշխանության վերականգնման, թե՛ Վրաստանի՝ իրապես վրացակենտրոն արևելումի, թե՛ Արևմուտքի՝ Այսրկովկասի վրա տարածվող ազդեցության գոտու խմբագրման տեսանկյունից: Աշխատանքում նշված իրողությունների համակողմանի ուսումնասիրման և վերհանման միջոցով բացահայտվում է թե՛ Արևմուտքի իրական նպատակը, թե՛ Վրաստանի իշխանությունների մղած պայքարի բուն իմաստը: Վրաստանի ղեկավարությունը նշված ճակատագրական ժամանակահատվածում ևս մի կարևոր քայլ կատարեց Մ. Սաակաշվիլիի իշխանության ժամանակաշրջանում արմատակալած արևմտյան կապանքներից ազատվելու ուղղությամբ: Արդյունքում՝ երկիրը դադարեց լինել Արևմուտքի ձեռքում մանրադրամ և, ամենակարևորը, չգնաց ՌԴ-ի դեմ 2-րդ ճակատի ռազմահենադաշտի վերածվելու կործանարար ուղով:

9- МЕСЯЧНАЯ ГЛУБОКАЯ КОНФРОНТАЦИЯ ЗАПАД–ГРУЗИЯ. ПОДОПЛЁКИ ПРИНЯТИЯ НАШУМЕВШЕГО ЗАКОНА И БОРЬБЫ С НИМ

Ваэ Д. Саркисян

Аннотация

В работе представлены события, произошедшие в Грузии и вокруг нее в период, длящийся с апреля по октябрь 2024 г. (до парламентских выборов, состоявшихся 26 октября): рециркуляция и принятие законопроекта «О прозрачности иностранного влияния», вызванные этими действиями предвыборные процессы и сложные развития вокруг Грузии. Все процессы, произошедшие в течение этих девяти месяцев, только на первый взгляд касались упомянутого законопроекта, а затем и закона. Фактически, этот сложный исторический период имел роковое значение как с точки зрения восстановления суверенитета Грузии, ее истинно грузиноцентричной ориентации, так и откорректирования сферы влияния Запада на Закавказье. Посредством всестороннего рассмотрения упомянутых в работе реалий раскрывается как реальная цель Запада, так и истинный смысл борьбы грузинских властей. В упомянутый судьбоносный период руководство Грузии сделало еще один важный шаг в сторону избавления от западного влияния, укоренившегося еще во времена правления Саакашвили. В результате страна перестала быть пешкой в руках Запада и, самое главное, не пошла по пагубному пути превращения в плацдарм для открытия 2-го фронта против РФ.

THE 9-MONTH PHASE OF THE WEST–GEORGIA DISCORDANCE: THE AFTERMATH OF THE ADOPTION OF THE OUTRAGEOUS LAW AND THE BACKGROUND OF THE STRUGGLE AGAINST IT

Vahe D. Sargsyan

Summary

The work presents the developments that took place in and around Georgia during the period from April to October 2024 (before the parliamentary elections held on October 26), the recirculation and adoption of "The Transparency of Foreign Influence" bill, the pre-election processes conditioned by it, and the complex developments that took place around Georgia. At first glance, the processes that took place during these nine months seemed to relate only to the bill, and then to the law. In reality, this complex historical period was of fatal importance both from the point of view of the restoration of Georgia's sovereignty, and the editing of Georgia's truly Georgian-centered reformation, and the Western zone of influence extending to the Transcaucasia. Through the comprehensive disclosure of the realities mentioned in the work, both the real goal of the West and the true meaning of the struggle waged by the Georgian authorities are revealed. During this fateful period, the Georgian leadership took another important step towards breaking free from the Western shackles that had taken root during M. Saakashvili's rule. As a result, the country ceased to be a pawn in the hands of the West and, most importantly, did not take the destructive path of becoming a bridgehead for a second front against Russia.

Վահե Դ. Սարգսյան[1]

ԱՐԵՎՄՈՒՏՔ–ՎՐԱՍՏԱՆ ԽՈՐԸ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ 9-ԱՄՍՅԱ ՓՈՒԼԸ. ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԵՏՆԱՊԱՏԿԵՐԸ[2]

(Մաս II, նախորդը տես՝ **I**)

Օրինագծի ընդունումը՝ խորհրդարանական ընդդիմության հիմնական հատվածի բոյկոտի պատճառ

«*Օպարերկրյա ազդեցության թափանցիկության մասին*» աղմկահարույց օրինագծի վերջնական ընթերցմամբ ընդունելուց հետո Վրաստանի ընդդիմադիր՝ «Միացյալ ազգային շարժումը», «Աղմաշենեբելիի ռազմավարությունը», «Լելոն՝ Վրաստանի համար», «Քաղաքացիներ», «Եվրաօպտիմիստներ», «Ազատություն» խմբակցություններն ու քաղաքական խմբերը, ինչպես նաև իբրև անկախ հանդես եկող մի քանի ընդդիմադիր պատգամավորներ պարբերաբար բոյկոտեցին խորհրդարանի աշխատանքները[3]: Ընդդիմադիր մեկ այլ՝ «Գիրչի» կուսակցության պատգամավոր Գերման Սաբոն էլ հայտարարեց, որ իրենք չեն պատրաստվում միանալ ընդդիմության բոյկոտի ռեժիմին, և որ

---

[1] Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայ գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայության, մասնավորապես՝ ջավախահայության հիմնախնդիրներ, Հայաստան–Վրաստան հարաբերություններում առկա բազմաբնույթ հիմնահարցեր, Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրներ: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 35 հոդվածի:

[2] Հոդվածը խմբագրություն է հանձնվել 12.12.2024 թ.:

[3] Մեկնաբանելով նշված ընդդիմադիր շրջանակների՝ քաղաքական հայացքներով պայմանավորված խորհրդարանական աշխատանքները բոյկոտելու փաստը, խորհրդարանի նախագահ Շ. Պապուաշվիլին մայիսի 20-ին կայացած բյուրոյի նիստում հայտարարել է, որ այս կերպ ընդդիմադիր պատգամավորները պարզապես խուսափում են պատասխանատվությունից [տե՛ս შალვა პაპუაშვილი ოპოზიციის ბოიკოტზე - არასერიოზულია ბოიკოტი იმაზე, რომ დარბაზში გვერდით მყოფი ადამიანი არ მომწონს და არ მინდა ერთი ჰაერი ვისუნთქოთ! - ეს არის ბოიკოტის გამოცხადება საკუთარი ამომრჩევლისთვის. 20.05.2024, https://www.interpressnews.ge/ka/article/800160-shalva-papuashvili-opoziciis-boikotze-araseriozulia-boikoti-imaze-rom-darbazshi-gverdit-mqopi-adamiani-ar-momcons-da-ar-minda-erti-haeri-visuntkot-es-aris-boikotis-gamocxadeba-sakutari-amomrchevlistvis/ (բեռնման օրը՝ 10.11.2024)]: Որոշ ընդդիմադիր շրջանակների կողմից խորհրդարանի աշխատանքները բոյկոտելու փաստը Շ. Պապուաշվիլին քննարկել է նաև հետագայում. բյուրոյի հունիսի 11-ի նիստում նա հայտարարել է, որ բոյկոտը ենթադրում է հանդիպման չմասնակցել քննարկվող հարցի պատճառով, իսկ ընդդիմությունը, ըստ խոսնակի, ցավոք, դա օգտագործում է հիմնականում արձակուրդների համար [տե՛ս Шалва Папуашвили – Бойкот подразумевает неявку на заседание из-за обсуждаемого вопроса, к сожалению, оппозиция в основном использует это для каникул. 11.06.2024, https://1tv.ge/lang/ru/news/shalva-papuashvili-bojkot-podrazumevaet-nejavku-na-zasedanie-iz-za-obsuzhdaemogo-voprosa-k-sozhaleniju-oppozicija-v-osnovnom-ispolzuet-jeto-dlja-kanikul/ (բեռնման օրը՝ 10.11.2024)]:

բոյկոտ հայտարարելը հիմարություն է, քանի որ առջևում վետոյի խնդիր կա, կան փաստարկներ, որոնք պետք է բարձրաձայնել, դիրքորոշում, որը պետք է որդեգրել և, ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է օգտագործել այս հարթակը[4]: Նույն օրը տարածվեց Եվրահանձնաժողովի և ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի համատեղ հայտարարությունը, ըստ որի՝ ԵՄ-ն հստակ և բազմիցս հայտարարել է, որ օրենքի ոգին և բովանդակությունը չեն համապատասխանում ԵՄ հիմնական նորմերին և արժեքներին: *«Այն կխաթարի քաղաքացիական հասարակության և անկախ ՀԼՄ-ների աշխատանքը: …Այս օրենքի ընդունումը բացասաբար է անդրադառնում Վրաստանի՝ դեպի ԵՄ առաջընթացի վրա: …Մենք կոչ ենք անում Վրաստանի իշխանություններին՝ հետ կանչել օրենքը»,* – նշված էր հայտարարության մեջ[5]:

ԵՄ դիվանագետների դեսանտ Վրաստանում. աննախադեպ երևույթ համաշխարհային դիվանագիտության պատմության մեջ

ԵՄ-ի և Արևմուտքի համար այնքան կարևոր էր Վրաստանի իշխանությունների վրա ճնշում գործադրելն ու օրենքը չեզոքացնելը, որ օրինագծի ընդունման հաջորդ իսկ օրը՝ մայիսի 15-ին, օրենքի քննարկման նպատակով Թբիլիսի ժամանեցին Իսլանդիայի, Լիտվայի, Էստոնիայի և Լատվիայի արտաքին գործերի նախարարները, ովքեր բանակցություններ վարեցին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի, վարչապետ Ի. Կոբախիձեի և խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի[6] հետ: Վրաստանի հասարակական-քաղաքական դաշտում իսկական փոթորիկ բարձրացավ, երբ Թբիլիսի ժամանած եվրոպացի պաշտոնյաները միացան ցուցարարներին: Այսպես, Իսլանդիայի, Լիտվայի և Էստոնիայի ԱԳ նախարարները այցելեցին խորհրդարանի շենքի մոտ և դիմեցին

---

[4] Часть оппозиции объявила бойкот работе парламента Грузии – реакции. 15.05.2024, https://sputnik-georgia.ru/20240515/chast-oppozitsii-boykotiruet-dalneyshuyu-rabotu-parlmenta-gruzii---otsenka-deputatov-287923240.html (բեռնման օրը՝ 08.11.2024).

[5] Statement by High Representative Josep Borrell with the European Commission on the adoption of the "transparency of foreign influence" law in Georgia. 15 May 2024, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/fr%5E/ statement_24_2628 (բեռնման օրը՝ 08.11.2024).

[6] Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի և Իսլանդիայի արտաքին գործերի նախարարներին ասել է, որ Եվրամիությունից ստացվող գումարների մի մասը միշտ չէ, որ ուղղվում է բարի նպատակներին, ինչի պատճառով անհրաժեշտ է ֆինանսավորման թափանցիկության մասին օրենք [տե՛ս Глава парламента Грузии рассказал гостям из стран ЕС, на что идут европейские деньги. 15.05.2024, https://sputnik-georgia.ru/20240515/glavy-mid-stran-es-soglasny-chto-v-gruzii-est-problema-s-prozrachnostyu--papuashvili-287927503.html (բեռնման օրը՝ 08.11.2024)]:

ներկաներին[7]: Հանրահավաքի վայրում հայտնվեց և ցուցարարներին համերաշխություն հայտնեց նաև այդ օրերին Վրաստան ժամանած եվրոպացի պատվիրակների մեկ այլ խումբ՝ բաղկացած ԵՄ հինգ անդամ երկրների (Չեխիա, Լեհաստան, Գերմանիա, Լիտվա և Ֆինլանդիա) խորհրդարանների արտաքին հարաբերությունների հանձնաժողովների նախագահներից[8]: Գերմանիայի Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Միխայել Ռոթը Թբիլիսիում կայացած մամուլի ասուլիսում իշխող «Վրացական երազանք» կուսակցությունն անվանել է «*Վրացական մղձավանջ*» և ընդգծել, որ վրացական իշխանությունները չեն կարողանա կառուցել պայծառ ապագա առանց «օտարերկրյա գործակալների մասին» օրենքի դեմ պայքարող երիտասարդների՝ հենվելով միայն իրենց գլխավոր դաշնակցի՝ Ուղղափառ եկեղեցու վրա: Ըստ գերմանացի պաշտոնյայի՝ եթե վրացական իշխանությունները փորձեն դա անել, ուղեղների արտահոսքը կատարյալ աղետ կլինի Վրաստանի համար:

Փաստենք, որ Վրաստանի իշխանությունների համար ավելի լավ նվեր, քան Վրաստանում բացարձակ հեղինակություն հանդիսացող Վրաց Ուղղափառ եկեղեցուն նույնականացնելը իշխանությունների հետ կամ ՎՈՒԵ-ին համարել իշխանությունների

---

[7] В Грузии раскритиковали глав МИД Исландии, Литвы и Эстонии за посещение митинга. 15.05.2024, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/20810773 (բեռնման օրը՝ 08.11.2024). Լիտվայի, Էստոնիայի և Իսլանդիայի արտգործնախարարների ելույթը Թբիլիսիի կենտրոնում *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրինագծի դեմ կազմակերպված հանրահավաքում ծառայում է ոչ թե խաղաղությանը, այլ «մայդանացման» գործընթացին. այսպիսի տեսակետ է հայտնել Վրաստանի խորհրդարանի ընթացակարգային հարցերի հանձնաժողովի նախագահ Ի. Քադագիշվիլին՝ հավելելով, որ իրենք՝ վրացիները, պետք է լավ հասկանան՝ ինչ է անկախությունը, ինչ է ինքնիշխանությունը [Выступление глав МИД стран ЕС на акции в Тбилиси служит "майданизации" – депутат. 16.05.2024, https://sputnik-georgia.ru/20240516/ vystuplenie-glav-mid-stran-es-na-aktsii-v-tbilisi-sluzhit-maydanizatsii---deputat-287936493.html (բեռնման օրը՝ 09.11.2024)].

[8] Վրաստանի խորհրդարանի նախագահ Շ. Պապուաշվիլին Թբիլիսիում կայացած հանրահավաքում գերմանացի և լիտվացի պատգամավորների ելույթներն անվանել է լավագույն լյուստրացիա, իսկ ելույթ ունեցող եվրոպացի պաշտոնյաներին՝ օտարերկրյա դերասաններ, որոնք հանդես են եկել իրենց իսկ կազմակերպած, իրենց կողմից ֆինանսավորվող ՀԿ-ների կողմից հովանավորվող հակակառավարական հանրահավաքում [տե՛ս Лучшая люстрация – Папуашвили о выступлении депутатов Германии и Литвы на акции в Тбилиси. 15.05.2024, https://sputnik-georgia.ru/20240515/luchshaya-lyustratsiya--papuashvili-o-vystuplenii-deputatov-germanii-i-litvy-na-aktsii-v-tbilisi-287932109.html (բեռնման օրը՝ 09.11.2024)]. Մեկ օր անց՝ մայիսի 16-ին, խորհրդարանի նախագահն անդրադարձել է նաև Լիտվայի, Էստոնիայի և Իսլանդիայի ԱԳ նախարարների՝ Թբիլիսիի կենտրոնում ունեցած ելույթներին՝ սոցցանցի իր էջում նշելով. *«Օտարերկրյա պաշտոնյաների մասնակցությունն այս բողոքի ակցիային՝ անտեսելով վրացական ինքնիշխանությունը և դիվանագիտական գործելակերպը՝ հանուն «ժողովրդավարության և մարդու իրավունքների», լավագույն դեպքում կեղծավորություն է, իսկ վատագույն դեպքում՝ երկրում հեղաշրջում իրականացնելու փորձ»* [տե՛ս Это попытка переворота – Папуашвили о выступлении глав МИД стран ЕС на акции в Тбилиси. 16.05.2024, https://sputnik-georgia.ru/20240516/eto-popytka-perevorota--papuashvili-o-vystuplenii-glav-mid-stran-es-na-aktsii-v-tbilisi---287946288.html (բեռնման օրը՝ 09.11.2024):

գլխավոր դաշնակից, դժվար էր պատկերացնելը: Եվ Մ. Ռոթի այս մեծագույն վրիպակը թե՛ լավագույն խաղաքարտը դարձավ Վրաստանի իշխանությունների ձեռքին, թե՛ ՎՈՒԵ-ի հավատավոր հետևորդ վրաց հասարակության համակրանքն ինչ-որ տեղ թեքեց իշխանությունների կողմը: Արձագանքները, բնականաբար, իրենց ուշացնել չտվեցին. «Ժողովրդի ուժ» իշխանական կուսակցության պատգամավոր Գուրամ Մաճարաշվիլին մեղադրել է Բունդեսթագի արտաքին քաղաքականության հանձնաժողովի ղեկավարին Վրաց Ուղղափառ եկեղեցուն և վրաց ժողովրդին վիրավորելու մեջ: Պատգամավորի խոսքով՝ ուղղափառությանը ծաղրելը Մ. Ռոթի կողմից «*իսկական լկտիություն է*»[9]: Ավելի խիստ էր Պատրիարքարանի գնահատականը. հասարակայնության հետ կապերի ղեկավար, վարդապետ Անդրիա Ջաղմաիձեն հայտարարել է հետևյալը. *«Մենք լսեցինք Բունդեսթագի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Միխայիլ Ռոթի շատ ամոթալի հայտարարությունը, որտեղ նա շատ վատ կերպով դիպավ եկեղեցուն, բաժանեց այն երիտասարդությունից, պայծառ ապագայից, և մենք գիտենք, թե որն է նրա ապրելակերպը»*[10]:

Արևմուտքի և արևմտամետների դիմադրության պայմաններում նախագահի կողմից վետոյի կիրառումը

Փաստենք, որ, չնայած *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ընդունմանը, մայրաքաղաքում շարունակվում էին օրենքի դեմ ապրիլի 15-ից սկիզբ առած բողոքի ցույցերն ու ընդվզման գործողությունները, որոնք հաճախ վերաճում էին ոստիկանության հետ բախումների: Ելնելով որոշակի լարված իրավիճակից՝ Վրաստանի վարչապետ Ի. Կոբախիձեն մայիսի 17-ին հայտարարեց, որ օրենքի մասին էմոցիաներն արդեն մարել են, իսկ ինքը հանրային քննարկման է հրավիրում օրենքի դեմ բողոքող երիտասարդներին և 2-3 մեծահասակների, որոնց երիտասարդները կհամարեն հեղինակավոր փորձագետներ[11]: Մեկ օր անց՝ մայիսի 18-ին, Վրաստանի արևմտամետ և

[9] "Вмешательство в грузинскую политику" – реакция на участие европейских политиков в акции. 15.05.2024, https://sputnik-georgia.ru/20240515/vmeshatelstvo-v-gruzinskuyu-politiku--reaktsiya-na-uchastie-evropeyskikh-politikov-v-aktsii-287928438.html (բեռնման օրը՝ 09.11.2024).

[10] ანდრია ჯაღმაიძე - მოვისმინეთ მიხაელ როთის სამარცხვინო განცხადება, სადაც ეკლესიას ძალიან ცუდად შეეხო, გამიჯნა ახალგაზრდობისგან, ნათელი მომავლისგან და თავად მისი ცხოვრების წესი ვიცით, რაც არის. 16.05.2024, https://1tv.ge/news/andria-jaghmaidze-movisminet-mikhael-rotis-samarckhvino-ganckhadeba-sadac-eklesias -dzalian-cudad-sheekho-gamijna-akhalgazrdobisgan-nateli-momavlisgan-da-tavad-misi-ckhovrebis-wesi-vicit-rac-aris/ (բեռնման օրը՝ 09.11.2024).

[11] Премьер-министр готов на дискуссию с молодежью на тему закона об "иноагентах". 17.05.2024, https://sputnik-georgia.ru/20240517/premer-ministr-gotov-na-diskussiyu-s-molodezhyu-na-temu-zakona-ob-

ընդդիմադիր նախագահը վետո դրեց օրենքի վրա՝ հայտարարելով, որ այն իր էությամբ և ոգով «*ռուսական օրենք*» է, ենթակա չէ ոչ մի փոփոխության, ոչ մի բարելավման, հետևաբար՝ շատ պարզ վետո՝ այս օրենքը պետք է չեղյալ համարվի[12]: Իշխող կուսակցության առաջնորդ Ի. Ղարիբաշվիլին էլ նույն օրը հայտարարեց, որ իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը պատրաստ է երկխոսության *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի նախագծի շուրջ, և նախագահի վետոն դրա համար իդեալական հնարավորություն կլինի[13]: Արձագանքելով Ս. Զուրաբիշվիլիի որոշմանը՝ վարչապետ Ի. Կոբախիձեն հայտարարել է, որ Վրաստանի նախագահը փակել է խնդրո առարկա օրենքի նախագծի շուրջ առողջ քննարկման տարածքը՝ օգտագործելով վետոյի իր իրավունքը: Վարչապետը ներկայացրել է նաև սոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքները, ըստ որոնց՝ երկրի բնակչության ավելի քան 60%-ը կողմ է *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքին, իսկ բուն թափանցիկության գաղափարին և ՀԿ-ների թափանցիկությանը՝ բնակչության 80%-ից ավելին[14]:

Վենետիկի հանձնաժողովի եզրակացության համանմանությունը Արևմուտքի դիրքորոշմանը

Վրաստանի իշխանություններն այդ փուլում սպասում էին նաև Վենետիկի հանձնաժողովի եզրակացությանը, որն *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացություն էր պատրաստում արագացված

---

inoagentakh-287974999.html (բեռնման օրը՝ 09.11.2024).

[12] პრეზიდენტმა რუსულ კანონს ვეტო დაადო. 18.05.2024. https://president.ge/index.php?m=206&appeals_id=396 (բեռնման օրը՝ 09.11.2024). Նախագահն առաջարկել է օրենքն ուժի մեջ մտնելու հաջորդ օրը չեղարկել օրենքը: Սալոմե Զուրաբիշվիլիի կողմից ավելացված նշված հոդվածը, ըստ որի՝ օրենքն ուժը կորցնում է ուժի մեջ մտնելուց մեկ օր անց, խորհրդարանի նախագահ Շ. Պապուաշվիլին անվանել է ծաղր հասարակության հանդեպ: *«Ինչ վերաբերում է հրապարակման օրվանից չեղարկելուն, սա ծաղր է հասարակությանը, տիկին Սալոմեն արդեն կիրառել է բոլոր մեթոդները՝ ցույց տալու համար, որ իրեն այս երկրի քաղաքացի չի համարում, իսկ Սահմանադրությունն իր Սահմանադրությունը չէ, և նա այս մարդկանց իր ժողովուրդը չի համարում: Նա ծաղրում է մարդկանց (ասելով – «Սպուտնիկի» խմբ.), որ մենք պետք է օրենք ընդունենք մեկ օրվա համար... Մենք, իհարկե, կհաղթահարենք վետոն»,* – ասել է Շ. Պապուաշվիլին [տե՛ս "Грузинская мечта" преодолеет вето президента на закон об "иноагентах" – Папуашвили. 20.05.2024, https://sputnik-georgia.ru/20240520/gruzinskaya-mechta-preodo leet-veto-prezidenta-na-zakon-ob-inoagentakh---papuashvili-288003864.html (բեռնման օրը՝ 10.11.2024)].

[13] Вето по закону об "иноагентах" станет идеальной возможностью для диалога – Гарибашвили. 18.05.2024, https://sputnik-georgia.ru/20240518/veto-po-zakonu-ob-inoagentakh-stanet-idealnoy-vozmozhnostyu-dlya-dialoga--garibashvili-287985793.html (բեռնման օրը՝ 09.11.2024).

[14] Президент закрыла пространство для дискуссии – Кобахидзе о вето на закон об "иноагентах". 20.05.2024, https://sputnik-georgia.ru/20240520/zurabishvili-zakryla-prostranstvo-dlya-diskussii--premer-gruzii-o-veto-prezidenta-288003291.html (բեռնման օրը՝ 09.11.2024).

կարգով, և Վրաստանի խորհրդարանը քննարկելու էր այն մինչև օրենքի վերջնական ընդունումը: Ըստ Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Գիորգի Կախիանիի՝ դժվար է պատկերացնել, թե ինչ փաստարկներ կարող են լինել արտաքին ազդեցության թափանցիկության դեմ[15]: Ինչպես և սպասելի էր, մայիսի 21-ին հրապարակված եզրակացությամբ Վենետիկի հանձնաժողովը Վրաստանին առաջարկել է հրաժարվել *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի նախագծի տվյալ տեսքով ընդունումից՝ միավորումների և արտահայտվելու ազատության վրա դրա անխուսափելի բացասական հետևանքների պատճառով: *«Վենետիկի հանձնաժողովը խստորեն խորհուրդ է տալիս չեղյալ համարել օրենքը ներկայիս տեսքով, քանի որ դրա հիմնարար թերությունները զգալի բացասական հետևանքներ կունենան միավորումների և արտահայտվելու ազատության, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի, հանրային գործերին մասնակցելու իրավունքի և խտրականության արգելքի վրա»,* – ասված էր եզրակացության մեջ[16]: Իշխող ուժի ներկայացուցիչ, խորհրդարանի փոխխոսնակ Նինո Ցիլոսանին քննադատել է եզրակացությունը: *«Ցավոք, ինչպես և մենք ակնկալում էինք, Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունն ավելի շատ ծառայում է երկրում անկարգությունների լիցքերի ավելացմանը, քան այս օրենքի հետ կապված բովանդակալից մեկնաբանություններին»,* – ասել է փոխխոսնակը: Իշխող ուժի պատգամավոր Ի. Քադագիշվիլիի կարծիքով էլ եզրակացության մեջ ավելի շատ քաղաքական դրդապատճառներ կան, քան իրավական[17]:

Վրաստանի վարչապետի ահազանգը անձնական սպառնալիքների մասին, Արևմուտքի՝ հակադարձումը

«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի ընդունման գործում Վրաստանի իշխանությունների կարծր դիրքորոշման դեմ Արևմուտքի կիրառած ճնշումները,

---

[15] Правящая партия в ожидании заключения Венецианской комиссии по закону об "иноагентах". 19.05.2024, https://sputnik-georgia.ru/20240519/pravyaschaya-partiya-v-ozhidanii-zaklyucheniya-venetsianskoy-komissii-po-zakonu-ob-inoagentakh-287998858.html (բեռնման օրը՝ 09.11.2024).

[16] EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION), GEORGIA, URGENT OPINION ON THE LAW ON TRANSPARENCY OF FOREIGN INFLUENCE, issued on 21 May 2024 pursuant to Article 14a of the Venice Commission's Revised Rules of Procedure on the basis of comments by Ms. Veronika BÍLKOVÁ (Member, Czechia), Mr. David A. KAYE (Member, United States of America), Ms. Herdís KJERULF THORGEIRSDÓTTIR (Member, Iceland), Mr. Zlatko KNEŽEVIĆ (Member, Bosnia and Herzegovina), Strasbourg, 21 May 2024, https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2024)013-e (բեռնման օրը՝ 10.11.2024).

[17] Политически мотивировано – "Грузинская мечта" дала оценку заявлению Венецианской комиссии. 22.05.2024, https://sputnik-georgia.ru/20240522/politicheski-motivirovano----gruzinskaya-mechta-dala-otsenku-zayavleniyu-venetsianskoy-komissii-288036247.html (բեռնման օրը՝ 11.11.2024).

ըստ վրացական իշխանությունների, դրսևորվել են անգամ անձնական սպառնալիքների տեսքով: Մայիսի 23-ին Վրաստանի վարչապետը հայտարարել է, որ եվրահանձնակատարներից մեկը հեռախոսազրույցի ժամանակ սպառնալիքներ է հնչեցրել՝ հիշեցնելով Սլովակիայի վարչապետի դեմ իրականացված մահափորձը: *«Նույնիսկ երկարատև շանտաժի ֆոնին ապշեցուցիչ էր եվրահանձնակատարներից մեկի հետ հեռախոսազրույցի ժամանակ հնչած սպառնալիքը: Մասնավորապես, ինձ հետ զրույցում եվրահանձնակատարը թվարկեց մի շարք միջոցներ, որոնք կարող են ձեռնարկել արևմտյան քաղաքական գործիչները թափանցիկության օրենքի վրա վետոն հաղթահարելուց հետո և, թվարկելով այդ միջոցները, նշեց. «Դուք տեսաք, թե ինչ եղավ Ֆիկոյի[18] հետ, և դուք պետք է զգույշ լինեք»»,* – մեջբերել է Ի. Կոբախիձեն եվրահանձնակատարի խոսքերը՝ հավելելով, որ այս համատեքստում Սլովակիայի վարչապետի ճակատագրի մասին հիշատակելը շատ տագնապալի է[19]: Վարչապետի այս ահազանգին հաջորդեց Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարհեիի հայտարարությունը՝ բացատրությամբ, թե ինչ է նկատի ունեցել եվրահանձնակատարը՝ Վրաստանի վարչապետ Ի. Կոբախիձեին հիշեցնելով Սլովակիայի վարչապետ Ռոբերտ Ֆիկոյի դեմ մահափորձի մասին: Վերջինս ափսոսանք է հայտնել, որ իր հեռախոսազրույցի որոշ հատվածներ դուրս են բերվել համատեքստից[20]:

Արևմուտքի նոր պատժամիջոցները.
«Վրաց ժողովրդի ակտ» ամերիկյան օրինագիծը

«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի ընդունմանն ի պատասխան՝ ԱՄՆ-ի պետքարտուղար Էնթոնի Բլինքենը մայիսի 23-ին հայտարարություն տարածեց, ըստ որի՝ ԱՄՆ-ի Պետքարտուղարությունը Վրաստանի համար կիրառում է վիզային ռեժիմի սահմանափակման նոր քաղաքականություն, որը կտարածվի այն անձանց և նրանց ընտանիքի անդամների վրա, *«ովքեր պատասխանատու են կամ մեղսակից են*

[18] Սլովակիայի վարչապետ Ռոբերտ Ֆիկոն բազմիցս հանդես է եկել Ուկրաինային զենք մատակարարելու և ՆԱՏՕ-ին դրա անդամակցության դեմ: Նրա դեմ մահափորձը տեղի է ունեցել 2024 թ. մայիսի 15-ին Հանդլովա քաղաքում: Վարչապետին ուղղաթիռով տեղափոխել են հիվանդանոց: Ներքին գործերի նախարարության տվյալներով՝ հարձակվողը՝ 71-ամյա Յուրայ Ցինտուլան, ունեցել է քաղաքական շարժառիթներ:

[19] Премьер-министр Грузии заявил об угрозах со стороны еврокомиссара. 23.05.2024, https://sputnik-georgia.ru/20240523/premer-ministr-gruzii-zayavil-ob-ugrozakh-so-storony-evrokomissara-288059877.html (բեռնման օրը՝ 11.11.2024).

[20] EU official says remarks to Georgian PM on Slovak assassination attempt 'taken out of context'. 24.05.2024, https://www.reuters.com/world/europe/eu-official-says-remarks-georgian-pm-slovak-assassination-attempt-taken-out-2024-05-23/ (բեռնման օրը՝ 13.11.2024).

Վրաստանում ժողովրդավարությունը խարխլելու համար: Սա ներառում է այն անձանց, ովքեր պատասխանատու են Վրաստանում բռնության կամ ահաբեկման արշավի միջոցով ճնշելու քաղաքացիական հասարակությանը և խաղաղ հավաքների ազատությունը»[21]*:* Է. Բլինքենը հայտարարել է նաև Վրաստանի հետ երկկողմ համագործակցության համապարփակ վերանայման մասին: Իշխող «Վրացական երազանքը» Է. Բլինքենի հայտարարությունն անվանել է ԱՄՆ-ի կողմից 2012 թվականից իրականացվող, 2021–2022 թվականներից առավել ակտիվացած հակավրացական հռետորաբանության շարունակություն և Վրաստանի ինքնիշխանությունը, անկախությունը կոպտորեն և ցինիկ կերպով սահմանափակելու փորձ: Իշխող կուսակցությունը պատժամիջոցներն անվանել է աննախադեպ երևույթ համաշխարհային պատմության մեջ, *«երբ մի երկրի պաշտոնական ներկայացուցիչը սպառնում է պատժամիջոցներով մեկ այլ երկրի օրենսդրին միայն այն պատճառով, որ նա կողմ է քվեարկել թափանցիկության օրենքին: Այս իրադարձությունը գորշ տառերով կգրվի համաշխարհային քաղաքականության պատմության մեջ»*, – ասված էր հայտարարության մեջ[22]:

ԱՄՆ-ի սենատոր Ջին Շահինը 3 այլ սենատորների հետ մայիսի 23-ին ԱՄՆ-ի Սենատ է ներկայացրել *«Վրաստանում ժողովրդավարության և օրենքի գերակայության աջակցություն և այլ նպատակներով կամ «Վրաց ժողովրդի ակտ» (Georgian People's Act (GPA))»* օրինագիծը, ինչի առիթով ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը հայտարարություն է հրապարակել: Շրջանառված երկկուսակցական օրինագծով նախատեսվում է պատասխանատվության ենթարկել վրացական կառավարության պաշտոնյաներին և անձանց՝ կոռուպցիայի, մարդու իրավունքների ոտնահարման և *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը խթանելու կամ դրա ընդունումը հեշտացնելու համար: Օրինագիծը ներառում է մի շարք միջոցառումներ՝ ի պատասխան Վրաստանի իշխանությունների վերջին գործողությունների և քաղաքականության, ներառյալ պատժամիջոցները վրացի բարձրաստիճան պաշտոնյաների դեմ, արտաքին օգնության վերանայումը և առկա երկկողմ հարաբերությունների վերագնահատումը: Երկու հիմնական բաժնից բաղկացած *«Վրաց ժողովրդի ակտը»* կենտրոնանում է Վրաստանի անկախությունից ի վեր ԱՄՆ-Վրաստան հարաբերությունների

[21] U.S. Department of State, Announcement of a Visa Restriction Policy for Undermining Democracy in Georgia and Comprehensive Review of All U.S.–Georgia Cooperation. 23.05.2024, https://www.state.gov/announcement-of-a-visa-restriction-policy-for-undermining-democracy-in-georgia-and-comprehensive-review-of-all-u-s-georgia-cooperation/ (բեռնման օրը՝ 13.11.2024).

[22] Грубая попытка ограничить независимость Грузии – "Грузинская мечта" о возможных санкциях. 24.05.2024, https://sputnik-georgia.ru/20240524/grubaya-popytka-ogranichit-nezavisimost-gruzii--gruzinskaya-mechta-o-vozmozhnykh-sanktsiyakh-288075925.html (բեռնման օրը՝ 13.11.2024).

վրա և ընդգծում, թե ինչպես են վերջին իրադարձությունները խաթարում այդ հարաբերությունների շարունակականությունն ու ոգին: Դրանում նշվում է *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի նախագծի վերաշրջանառումը, հետագա լայնածավալ բողոքի ակցիաները, ցուցարարների նկատմամբ ուժի անհամաչափ կիրառումը, ընդդիմադիր պատգամավորներին խորհրդարանական լսումներից հեռացնելը, հակաարևմտյան և հակաամերիկյան հռետորաբանությունը և այլն: Օրինագծում նշվում է, որ ԱՄՆ-ը պետք է դիտարկի Վրաստանի եվրատլանտյան ինտեգրմանը խոչընդոտող գործողությունների համար պատասխանատու անձանց նկատմամբ ճամփորդությունների սահմանափակումները կամ պատժամիջոցները: *«Որպես Վրաստանի և նրա եվրաատլանտյան ինտեգրման երկարամյա կողմնակից, ես խորապես մտահոգված և հիասթափված եմ օտարերկրյա գործակալների մասին օրինագծի ընդունումով և երկրում տեղի ունեցող արագ քաղաքական տեղաշարժով, որը հակասում է վրաց ժողովրդի ցանկություններին»,* – հայտարարել է սենատոր Ջ. Շահինը[23]: Հավելենք, որ ամերիկացի սենատորներ Ջին Շահինը և Ջիմ Ռիշը 2024 թ. հոկտեմբերի 22-ին հայտարարեցին, որ ևս 10 սենատորներ կմիանան «*Վրաստանի ժողովրդի ակտ*» երկկուսակցական օրինագծի աջակցությանը[24]:

«ՄԵԳՈԲԱՐԻ Ակտը».
ամերիկյան պատժամիջոցների հերթական փաթեթը

2024 թ. մայիսի 24-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Հելսինկյան հանձնաժողովը, որը պաշտոնապես հայտնի է որպես Եվրոպայում անվտանգության և համագործակցության հանձնաժողով, ողջունելով Էնթոնի Բլինքենի՝ մայիսի 23-ին արված հայտարարությունը, իր հերթին հայտարարություն է տարածել «*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտի*» (*MEGOBARI Act*) և դրա հիմնական դրույթների վերաբերյալ (*MEGOBARI – Mobilizing and Enhancing Georgia's Options for Building Accountability, Resilience, and Independence Act* կամ *MEGOBARI Act*[25], թարգմանաբար՝ *«Վրաստանի կարողականությունների, մոբիլիզացիայի և ընդլայնման*

[23] U.S. Senate's Foreign Relations Committee publishes statement on Georgian People's Act. 25.05.2024. https://1tv.ge/lang/en/news/u-s-senates-foreign-relations-committee-publishes-statement-on-georgian-peoples-act/ (բեռնման օրը՝ 30.11.2024).

[24] Bipartisan Support Grows for Shaheen, Risch Legislation That Would Hold Georgian Officials Accountable for Corruption, Human Rights Abuses and Anti-Democratic Efforts. 10.22.2024. https://www.shaheen.senate.gov/bipartisan-support-grows-for-shaheen-risch-legislation-that-would-hold-georgian-officials-accountable-for-corruption-human-rights-abuses-and-anti-democratic-efforts? (բեռնման օրը՝ 30.11.2024).

[25] Տե՛ս Ակտը այստեղ՝ https://joewilson.house.gov/sites/evo-subsites/joewilson.house.gov/files/evo-media-document/MEGOBARI%20Signed.pdf (բեռնման օրը՝ 28.11.2024).

ակտ՝ հաշվետվողականության, կայունության և անկախության համար», իսկ «*MEGOBARI*» հապավումը համապատասխանում է վրացերեն «*მეგობარი*» բառին, որը թարգմանաբար նշանակում է *«ընկեր»*): Երկկուսակցական «*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտը*» Ներկայացուցիչների պալատ է ներկայացրել ԱՄՆ-ի Հելսինկյան հանձնաժողովի նախագահ, հանրապետական կոնգրեսական Ջո Ուիլսոնը: «*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտը*» պատժամիջոցներ է նախատեսում իշխող «Վրացական երազանք» կուսակցության կառավարության համար, եթե ընդունվի *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը, ինչպես նաև ռազմական և տնտեսական համագործակցության փաթեթներ, *«եթե երկիրը վերադառնա ժողովրդավարության ուղի»:* Ըստ Հելսինկյան հանձնաժողովի՝ օրինագիծը նպատակ ունի ամրապնդել ժողովրդավարական պրակտիկան, մարդու իրավունքները և օրենքի գերակայությունը Վրաստանում և վերահաստատում է ԱՄՆ-ի հանձնառությունը՝ աջակցելու Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրմանը և դիմակայելու ավտորիտար ռեժիմների, հատկապես՝ Ռուսաստանի ազդեցությանը:

«*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտի*» հիմնական դրույթներն ուսումնասիրելիս՝ պարզ է դառնում, որ ԱՄՆ-ի հիմնական և առանցքային մտահոգության առարկան, որը նա արտահայտում է նշյալ օրենքը դատապարտելու քողի տակ, հանդիսանում է ոչ միայն Վրաստան-Ռուսաստան հարաբերությունների բարելավումը, այլև Վրաստան-Չինաստան համագործակցության խորացումը և Չինաստանի աճող ազդեցությունը Վրաստանի վրա: Մեր դիտարկմամբ՝ «*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտով*» սահմանված բոլոր պատժամիջոցները Վրաստանի և, հատկապես, Վրաստանի իշխանությունների դեմ, հենց այս վերջին պատճառով են առաջացել, և օրենքը միայն առիթ էր և շղարշ՝ այդ ամենը կիրառելու համար: Այսպես, շրջանառված օրենքը պահանջում է բազմաթիվ զեկույցներ՝ հաշվետվողականություն ապահովելու համար, ներառյալ Վրաստան ռուսական հետախուզության ներթափանցման գնահատականները և Չինաստանի հետ հնարավոր համագործակցությունը: «*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտի*»՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի Հելսինկյան հանձնաժողովի հայտարարությամբ նկարագրված հիմնական դրույթներում նշված է նաև, որ՝ *«ի պատասխան Վրաստանում վերջերս տեղի ունեցած ժողովրդավարության անկմանը, ակտը կոչ է անում ավելի ուշադիր ուսումնասիրել Վրաստանի կառավարության գործողությունները և նրա կապերը Ռուսաստանի և այլ ավտորիտար ռեժիմների հետ»*[26]:

Առաջ անցնելով՝ նշենք, որ Վրաստանի դեմ պատժամիջոցների մասին այս օրինագիծը՝ «*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտը*», հուլիսի 11-ին ընդունվեց ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների

[26] Commission on Security and Cooperation in Europe, U. S. Helsinki Commission, Wilson, Cohen, Hudson, Veasey Introduce MEGOBARI Act. 24.05.2024, https://www.csce.gov/press-releases/wilson-cohen-hudson-veasey-introduce-megobari-act/? (բեռնման օրը՝ 28.11.2024).

պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում[27]: Օրինագիծը հիշատակվել է 2024 թ. սեպտեմբերի 12-ին ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում տեղի ունեցած քննարկման ժամանակ: *«Հակա-ՀԿ օրենքները և ժողովրդավարական ռեպրեսիայի այլ գործիքները»* խորագրով լսումներին զեկույցով հանդես եկած «Միջազգային թափանցիկություն-Վրաստան» («Թրանսփերենսի Ինթերնեշնլ–Վրաստան») արևմտյան կազմակերպության գործադիր տնօրեն Էկա Գիգաուրին վրացիներին աջակցելու համար երախտագիտություն է հայտնել ամերիկացի և եվրոպացի դաշնակիցներին՝ աջակցությունների թվում շեշտելով նաև, որ նրանք հանդես են գալիս «*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտ*» և «*Վրաց ժողովրդի ակտ*» (*Georgian People's Act (GPA)*) նախաձեռնություններով[28]: Նոյեմբերի 15-ին հայտարարվեց, որ ԱՄՆ-ի ևս 10 սենատորներ աջակցել են երկկուսակցական «*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտին*»: Տվյալ օրվա դրությամբ օրինագծին աջակցում էր 19 սենատոր, այդ թվում՝ 9 հանրապետական, 9 դեմոկրատ և ԱՄՆ-ի Սենատի մեկ անկախ անդամ[29]: Նոյեմբերի 23-ին հանրապետական կոնգրեսական, Հելսինկյան հանձնաժողովի նախագահ և «*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտ*» օրինագծի հեղինակներից Ջո Ուիլսոնը հայտարարել է, որ աշխատում է օրինագիծը ԱՄՆ-ի Կոնգրես բերելու և այն ընդունելու ուղղությամբ[30]: Հուլիսի 31-ին, անդրադառնալով «*Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին*» օրենքի ընդունման պատճառով վրացի քաղաքական գործիչների և նրանց ընտանիքների անդամների դեմ պատժամիջոցներ սահմանող «*ՄԵԳՈԲԱՐԻ Ակտ*» օրինագծին, Վրաստանի կառավարության ղեկավար Ի. Կոբախիձեն հայտարարեց, որ այն պարունակում է ուղղակի շանտաժ, և դա քայլ չէ, որը կօգնի վերականգնել Վրաստանի և ԱՄՆ-ի՝ վերջին 3–4 տարվա ընթացքում վատթարացած հարաբերությունները: *«Դուք չեք կարող այդ ակտն անվանել «ՄԵԳՈԲԱՐԻ»* (նկատի ունի հապավման թարգմանության «*ընկեր*» իմաստը վրացերենում – **Վ.Ս.**) *և շանտաժը դարձնել այս ակտի հիմնական նպատակը»,* – ասել է Ի. Կոբախիձեն[31]:

---

[27] აშშ-ის წარმომადგენელთა პალატის საგარეო საქმეთა კომიტეტმა საქართველოსთან დაკავშირებით „მეგობარი აქტი“ მიიღო. 11.07.2024, https://www.csce.gov/press-releases/wilson-cohen-hudson-veasey-introduce-megobari-act/? (բեռնման օրը՝ 29.11.2024), հմմտ.՝ House Foreign Affairs Committee, HFAC Markup on Various Measures. 10.07.2024. https://foreignaffairs.house.gov/markup/hfac-markup-on-various-measures-8/? (բեռնման օրը՝ 29.11.2024).

[28] აშშ-ის სენატში საქართველოს არასამთავრობო ორგანიზაციების საწინააღმდეგო კანონების შესახებ მოსმენა გაიმართა. 12.09.2024. https://civil.ge/ka/archives/623860 (բեռնման օրը՝ 29.11.2024).

[29] More US senators back Megobari Act targeting Georgian officials over Democracy violations. 15.11.2024, https://jam-news.net/more-us-senators-back-megobari-act-targeting-georgian-officials-over-democracy-violations/ (բեռնման օրը՝ 29.11.2024).

[30] კონგრესმენი უილსონი: "მეგობარი აქტის" დადებითად გადასაწყვეტად ვმუშაობთ. 27.11.2024, https://www.amerikiskhma.com/a/congressmen-on-georgia/7873993.html (բեռնման օրը՝ 29.11.2024).

[31] Шантаж в прямой форме – премьер Грузии о рассматриваемом Конгрессом США законопроекте.

Նախագահի վետոյի հաղթահարումն՝ արևմտյան դիրքորոշումների առավել կարծրացման պատճառ

Համեմատաբար փոքր-ինչ մեղմ էր Եվրոպական Միության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հայտարարությունը, արված մայիսի 24-ին. *«Մեզ խիստ մտահոգում է «Օտարերկրյա գործակալների» օրենքը: Դա իսկապես չի օգնում Վրաստանին իր եվրոպական ճանապարհին, և մենք դա ասում ենք նրանց, բայց, միևնույն ժամանակ, մենք պետք է շատ զգույշ լինենք, որպեսզի չվնասենք նրանց ազգային զգացմունքները»,* – ասել է Ժ. Բորելը՝ հավելելով, որ ԵՄ-ն «*պետք է փափուկ լեզու օգտագործի*» և, միաժամանակ, հստակ դիրքորոշում ունենա, թե ինչն է համատեղելի եվրոպական ուղու հետ, ինչը՝ ոչ[32]: ԵՄ բարձր ներկայացուցչի տոնայնության մեղմացումը հավանաբար կապված էր կատարված փաստի հետ. օրենքն արդեն ընդունվել էր, Արևմուտքին չէր հաջողվել այն կանխել, սպառնալիքներն այժմ անօգուտ էին և կարող էին ավելի հեռացնել Վրաստանը արևմտյան ուղեծրից: Ավելին, Վրաստանի հարաբերությունների կարգավորումը ՌԴ-ի հետ, հատկապես՝ տնտեսական կապերի ամրապնդումը և Արևմուտքից ֆինանսատնտեսական կախվածության նվազումը ստեղծել էր մի վիճակ, երբ տվյալ դեպքում ավելի շատ Վրաստանն էր հարկավոր Արևմուտքի համար, քան՝ հակառակը:

Մայիսի 27-ին Վրաստանի խորհրդարանի իրավական հանձնաժողովը հաղթահարել է նախագահի վետոն, որը դրվել էր *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* աղմկահարույց օրինագծի վրա, իսկ նախագահի խորհրդարանական քարտուղար Գիորգի Մսխիլաձեն հայտարարել է, որ ամբողջ օրենքն անընդունելի է, հակասում է Սահմանադրության չորս հոդվածներին և պետք է չեղյալ համարվի: Հակադարձելով Գ. Մսխիլաձեին՝ իշխող կուսակցությունից փաստել են, որ՝ *«….նախագահը խորհրդարան է ուղարկել մի «թղթի կտոր», որը բացարձակապես զուրկ է որևէ փաստարկից կամ տրամաբանությունից, իսկ որոշ դեպքերում վիրավորանք է պարունակում»* (պատգամավոր Դավիթ Մատիկաշվիլի): Իշխող կուսակցության անդամները նաև պնդել են, որպեսզի Գ. Մսխիլաձեն *«հիմնավորի այն պնդումները, ըստ որոնց՝ օրինագիծը վտանգ է ներկայացնում հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների համար, մասնավորապես, կոնկրետ ո՞ր հոդվածով է սահմանափակվում կամ ինչ-որ կերպ, ուղղակի կամ անուղղակի,*

31.07.2024, https://sputnik-georgia.ru/20240731/shantazh-v-pryamoy-forme--premer-gruzii-o-rassmatrivaemom-kongressom-ssha-zakonoproekte-289266159.html (բեռնման օրը՝ 29.11.2024).

[32] EU's Borrell: Georgia's 'Foreign Agents' Law incompatible with European aspirations. 24.05.2024, https://1tv.ge/lang/en/news/eus-borrell-georgias-foreign-agents-law-incompatible-with-european-aspirations/ (բեռնման օրը՝ 13.11.2024).

կարող են խնդիրներ, սահմանափակումներ առաջանալ լրատվամիջոցների կամ հասարակական կազմակերպությունների համար» («Վրացական երազանքի» պատգամավոր Ալուդա Գուդուշաուրի)[33]:

Վետոյի վերջնական հաղթահարման նախօրեին՝ մայիսի 27-ին, ԱՄՆ-ի փոխնախագահ Քամալա Հարիսը Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիին ուղղված նամակում ասել է, որ ինքը և նախագահ Ջո Բայդենը «*մտահոգությամբ են հետևում Վրաստանում տեղի ունեցող իրադարձություններին, ողջունում են Ս. Զուրաբիշվիլիի՝ օրենքի վրա վետո դնելու նախաձեռնությունը, և որ ԱՄՆ-ը կանգնած է Վրաստանի նախագահի և բոլոր վրացիների կողքին՝ ավելի լավ ապագայի իրենց ձգտումներում*»[34]: Մեկնաբանելով ԱՄՆ-ի փոխնախագահ Քամալա Հարիսից *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի վերաբերյալ ստացված նամակը՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին հայտարարել է. *«Վրաստանի խորհրդարանը գործում է վրաց ժողովրդի, այլ ոչ թե այլ երկրների ժողովրդի կամ իշխանությունների մանդատով: Վրաց ժողովուրդը միակն է, ով մեզ տալիս է ցուցումներ և մանդատ՝ ընդունելու օրենքը: ....Ինձ ամենաշատը վրդովեցնում է այն, որ ԱՄՆ-ի կամ ԵՄ-ի տարբեր պաշտոնյաների ոչ մի հայտարարության մեջ ես չկարողացա կարդալ վրաց ժողովրդին տված խոսքումները, որ Ամերիկայից և ԵՄ-ից ստացված գումարները թափանցիկ են լինելու, և նրանք պատրաստ են հաշվետվողականություն ցուցաբերել»,* – ասել է Պապուաշվիլին՝ հավելելով, որ վրաց ժողովրդի 80%-ը կողմ է թափանցիկությանը, իսկ 60%-ը՝ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ընդունմանը[35]: Վետոյի հաղթահարման նախօրեն նշանավորվեց նաև Արևմուտքից եկած մեկ այլ ազդակով, և կրկին ասպարեզ դուրս եկավ ԵՄ բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը՝ նախազգուշական տոնով հայտարարելով, որ Եվրամիությունը կսկսի համապատասխան միջոցների քննարկումը հունիսին կայանալիք արտաքին հարաբերությունների խորհրդի հաջորդ նիստում, եթե Վրաստանում գործի *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը: Նրա խոսքով, ԵՄ որոշ երկրներ հայտարարել են, որ Վրաստանում *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրինագծի ընդունման հարցն այնքան էլ կարևոր չէ, իսկ մյուսներն ասում էին, որ

---

[33] Юркомитет парламента Грузии преодолел вето президента на закон об "иноагентах". 27.05.2024, https://sputnik-georgia.ru/20240527/yurkomitet-parlamenta-gruzii-preodolel-veto-prezidenta-na-zakon-ob-inoagentakh-288113367.html (բեռնման օրը՝ 13.11.2024).

[34] აშშ-ის ვიცე-პრეზიდენტი კამალა ჰარისი სალომე ზურაბიშვილს წერილით მიმართავს. 27.05.2024, https://1tv.ge/news/ashsh-is-vice-prezidenti-kamala-harisi-salome-zurabishvils-werilit-mimartavs/ (բեռնման օրը՝ 13.11.2024).

[35] Нам дает указания лишь грузинский народ – в "Грузинской мечте" ответили на критику Байдена. 27.05.2024, https://sputnik-georgia.ru/20240527/nam-daet-ukazaniya-lish-gruzinskiy-narod---v-gruzinskoy-mechte-otvetili-na-kritiku-baydena-288122627.html (բեռնման օրը՝ 13.11.2024).

դա հակասում է ԵՄ նորմերին և արժեքներին[36]: Թբիլիսին իր արձագանքում հիմնվեց հենց Ժ. Բորելի վերջին այս բացահայտման վրա. ըստ իշխող «Վրացական երազանք» կուսակցության պատգամավոր Գիորգի Կախիանիի՝ Ժ. Բորելի հայտարարությունը ցույց է տալիս, որ Վրաստանի հարցում բոլոր պետությունների դիրքորոշումը նույնը չէ, և այնպես չէ, որ բոլոր պետությունները նույն կերպ են մտածում, որ այս օրենքի ընդունումը Վրաստանի համար խոչընդոտ դառնա եվրոպական ճանապարհին: Պատգամավորը շեշտել է, որ Վրաստանի համար այս օրենքի ընդունումը ազգային անվտանգության խնդիր է[37]:

Մայիսի 28-ին, Ռուսթավելի պողոտայում՝ խորհրդարանի շենքի ճակատային հատվածի, ինչպես նաև ծառայողական մուտքերի առջև դիրքավորված ցուցարարների վանկարկումների ներքո Վրաստանի խորհրդարանը հաղթահարեց նախագահի՝ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* աղմկահարույց օրինագծի վրա դրված վետոն[38]: Մեկնաբանելով իրադարձությունը՝ վարչապետ Ի. Կոբախիձեն հայտարարել է, որ խորհրդարանը կարևոր իրավական հիմքեր է ստեղծել Վրաստանի պետական ինքնիշխանության ամրապնդման համար[39]: Չուշացավ նաև Արևմուտքի արդեն «ավանդական» դարձած ափսոսանքներով լի արձագանքը. Եվրոպական հանձնաժողովում բարձր ներկայացուցչի հայտարարության համաձայն՝ *«Եվրամիությունը խորապես ափսոսում է, որ Վրաստանի խորհրդարանը որոշել է չեղարկել նախագահի վետոն «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի վրա և անտեսել Վենետիկի հանձնաժողովի մանրամասն իրավական փաստարկները, որոնք հանգեցրել են այս օրենքը չեղյալ համարելու հստակ առաջարկությանը: ԵՄ-ն բազմիցս ընդգծել է, որ Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունված օրենքը հակասում է ԵՄ հիմնական սկզբունքներին և արժեքներին: Դրա ընդունումը հանգեցնում է ինը քայլերից առնվազն երեքի հետընթացին (ապատեղեկատվության, բևեռացման, հիմնարար իրավունքների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավման վերաբերյալ), որոնք ամրագրված*

[36] Foreign Affairs Council: Press remarks by High Representative Josep Borrell after the meeting. 27.05.2024, https://www.eeas.europa.eu/eeas/foreign-affairs-council-press-remarks-high-representative-josep-borrell-after-meeting-14_en (բեռնման օրը՝ 13.11.2024).

[37] Это вопрос национальной безопасности – в "Грузинской мечте" ответили на заявление Борреля. 28.05.2024, https://sputnik-georgia.ru/20240528/eto-vopros-natsionalnoy-bezopasnosti--v-gruzinskoy-mechte-otvetili-na-zayavlenie-borrelya-288127379.html (բեռնման օրը՝ 14.11.2024).

[38] პარლამენტმა „უცხოური გავლენის გამჭვირვალობის“ კანონზე პრეზიდენტის ვეტო დაძლია. 28.05.2024, https://1tv.ge/news/parlamentma-uckhouri-gavlenis-gamchvirvalobis-kanonze-prezidentis-veto-dadzlia/ (բեռնման օրը՝ 14.11.2024). Վետոյի հաղթահարմանն ու օրենքի սկզբնական տարբերակի ընդունմանը կողմ է քվեարկել 84 պատգամավոր, դեմ՝ 4-ը:

[39] საქართველოს მთავრობა, პრემიერ-მინისტრ ირაკლი კობახიძის პრესკონფერენცია. 29.05.2024, https://www.gov.ge/index.php?lang_id=GEO&sec_id=596&info_id=88614 (բեռնման օրը՝ 14.11.2024).

են թեկնածուի կարգավիճակի վերաբերյալ հանձնաժողովի հանձնարարականում»[40]*:* Նույն օրը Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Թբիլիսիի կենտրոնում *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրինագծի դեմ ցույցի մասնակիցներին ուղղված իր տեսաուղերձում աջակցություն է հայտնել նրանց և կոչ արել պատրաստվել գալիք խորհրդարանական ընտրություններին՝ հոկտեմբերի 26-ին[41]:

Վետոյի հաղթահարումից մեկ օր անց հասարակական կազմակերպությունները համատեղ հայտարարությամբ անհնազանդություն են հայտնել *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքին, որը պարտավորեցնում է տարեկան եկամտի 20%-ից ավելին օտարերկրյա ֆինանսավորում ունեցող ՀԿ-ներին և լրատվամիջոցներին գրանցվել օտարերկրյա ուժերի շահերը հետապնդող կազմակերպությունների ռեեստրում և լրացնել տարեկան հայտարարագիր: Ապրիլի 15-ից բողոքի զանգվածային միջոցառումներ իրականացնող շրջանակները նաև հայտարարել են, որ պայքարելու են վրացական և միջազգային դատարաններում օրենքը չեղարկելու համար[42]: Վրաստանում մեծ աղմուկ

---

[40] Statement by the High Representative with the European Commission on the final adoption of the law on transparency of foreign influence in Georgia. 28.05.2024, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/statement_24_2945 (բեռնման օրը՝ 14.11.2024).

[41] "Я – это вы, вы – это я" – президент Грузии обратилась к митингующим в Тбилиси. 28.05.2024, https://sputnik-georgia.ru/20240528/ya---eto-vy-vy---eto-ya---prezident-gruzii-obratilas-k-mitinguyuschim-v-tbilisi-288153445.html (բեռնման օրը՝ 14.11.2024). Նախագահը դեռ ուժի մեջ չմտած օրինագծի դեմ ցուցարարներին նաև կոչ է արել ստորագրություններ հավաքել Վրաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ հանրաքվե անցկացնելու վերաբերյալ և տանել իրեն, որպեսզի նա ստորագրի համապատասխան փաստաթուղթը: Նախագահի այս առաջարկը ոչ միանշանակ ընդունվեց անգամ ընդդիմադիրների շրջանակներում: Վրաստանի խոշորագույն ընդդիմադիր «Միացյալ ազգային շարժում» կուսակցության անդամ Զուրաբ Ճիաբերաշվիլի. *«2008-ին տեղի ունեցավ պլեբիսցիտը, ժողովրդի կամքն արտահայտված է արդեն 78-րդ հոդվածով, իսկ Վրաստանն արդեն ունի ԵՄ անդամակցության թեկնածու երկրի կարգավիճակ, այսինքն՝ մենք սկսում ենք վերանայե՞լ: Ո՞ւմ է սա ուրախացնում»*: Պատգամավոր, ընդդիմադիր «Միացյալ ազգային շարժման» առաջնորդներից Խատիա Դեկանոիձե. *«Երկիրը հայտարարել է իր եվրատլանտյան նկրտումների մասին, և հանրաքվեի գաղափարը, որի մասին խոսել է Սալոմե Զուրաբիշվիլին, ինձ համար անհասկանալի է»* [տե՛ս В оппозиции так и не поняли, зачем президенту Грузии проводить референдум. 28.05.2024, https://sputnik-georgia.ru/20240529/v-oppozitsii-tak-i-ne-ponyali-zachem-prezidentu-gruzii-provodit-referendum-288162773.html (բեռնման օրը՝ 14.11.2024)]: Ընտրական օրենսգրքի համաձայն՝ Վրաստանի նախագահը լիազորված է Վրաստանի խորհրդարանի և կառավարության կամ առնվազն 200 հազար ընտրողների խնդրանքով հանրաքվե նշանակել՝ դրա նշանակման մասին դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Խորհրդարանի նախագահ Շ. Պապուաշվիլին նախագահ Ս. Զուրաբիշվիլիի՝ Վրաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ հանրաքվե անցկացնելու նախաձեռնությունը չարաշահում (սպեկուլյացիա) է անվանել, որը չի համընկնում վրաց ժողովրդի կամքի հետ: Նրա խոսքով, նման ծրագրերն ինքնուրույն չեն ի հայտ գալիս, այլ «շշնջում են օտար հովանավորները» [տե՛ս "Это спекуляция" – Папуашвили об инициативе президента Грузии провести референдум. 29.05.2024, https://sputnik-georgia.ru/20240529/eto-spekulyatsiya--papuashvili-ob-initsiative-prezidenta-gruzii-provesti-referendum-288163677.html (բեռնման օրը՝ 14.11.2024)]:

[42] Неправительственный сектор Грузии отказывается регистрироваться в реестре "иноагентов". 29.05.2024, https://sputnik-georgia.ru/20240529/nepravitelstvennyy-sektor-gruzii-otkazyvaetsya-registrirovatsya-v-reestre-

բարձրացրեց նաև Գերմանիայի դեսպան Պետեր Ֆիշերի հայտարարությունը, ըստ որի՝ քանի դեռ գործում է *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը, իրենք Եվրամիությանն անդամակցելու շուրջ բանակցություններ չեն սկսելու Վրաստանի հետ: Մեկնաբանելով Գերմանիայի դեսպանի հայտարարությունը՝ վարչապետ Ի. Կոբախիձեն նշել է, որ դեսպանը, ով հակավրացական հայտարարություններ է անում, չի կարող արժեքավոր լինել երկրի համար[43]: Մայիսի 30-ին տարածվեց նաև ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) եզրակացությունը, ըստ որի՝ *«Վրաստանի* «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»» *նոր հաստատված օրենքը պարունակում է լուրջ թերություններ, որոնք այն անհամատեղելի են դարձնում մարդու իրավունքների միջազգային չափանիշների և երկրի՝ որպես ԵԱՀԿ պետության, պարտավորությունների հետ, և այն պետք է չեղարկվի»*[44]: Գնահատելով եզրակացությունը՝ իշխող «Վրացական երազանք» կուսակցության պատգամավոր Ռատի Իոնաթամիշվիլին հայտարարել է, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եզրակացությունը *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի վերաբերյալ վստահություն չի ներշնչում, այն ոչ անաչառ և կողմնակալ է, քանի որ փաստաթուղթը կազմող փորձագիտական խմբի մեջ է եղել Միխեիլ Սաակաշվիլիի փաստաբան Ջերեմի Մաքբրայդը, ով Ստրասբուրգի դատարանում պաշտպանել է Վրաստանի նախկին նախագահի շահերը: Պատգամավորի խոսքով՝ եզրակացությունը, անկասկած, թելադրված է եղել ժամանակին Սաակաշվիլիի կողմից հիմնված, Վրաստանի ամենամեծ ընդդիմադիր կուսակցության՝ «Միացյալ ազգային շարժման» խոսույթով[45]:

Նորանկախ Վրաստանի ամենաքննարկված օրենքն՝ ուժի մեջ

Այդուհանդերձ, Արևմուտքի դրդմամբ շուրջ մեկուկես ամիս անընդմեջ բողոքի ալիք բարձրացրած[46] և ամենատարբեր, հաճախ քրեորեն դատապարտելի, մեթոդներով գործած

---

inoagentov-288163253.html (բեռնման օրը՝ 14.11.2024).

[43] Антигрузинское заявление – премьер Грузии раскритиковал посла Германии. 30.05.2024, https://sputnik-georgia.ru/20240530/antigruzinskoe-zayavlenie--premer-gruzii-raskritikoval-posla-germanii-288175576.html (բեռնման օրը՝ 14.11.2024).

[44] Georgia's "transparency of foreign influence" law incompatible with democratic standards and human rights law: international human rights office ODIHR. 30.05.2024, https://www.osce.org/odihr/569925?fbclid=IwAR0n-HUKH36mksF_KD3ZwVO3hPD9OMmVM1BA7uDCaGB21kSH2UwdVb2n46k (բեռնման օրը՝ 19.11.2024).

[45] В "Грузинской мечте" сомневаются в объективности заключения БДИПЧ ОБСЕ. 31.05.2024, https://sputnik-georgia.ru/20240531/v-gruzinskoy-mechte-somnevayutsya-v-obektivnosti-zaklyucheniya-obsebdipch-288201165.html (բեռնման օրը՝ 20.11.2024).

[46] Հետաքրքրական է, որ խաղաղ հավաքներ թույլ չտալու կամ հավաքների մասնակիցների հանդեպ բռնություն գործադրելու մեջ մշտապես մեղադրվող Վրաստանի իշխանությունները 2024 թ. հուլիսի 23-ին հայտարարեցին, որ Խաղաղ հավաքների ազատության ինդեքսում Վրաստանը ընդգրկվել է աշխարհի

հասարակական կազմակերպություններին ու ուժերին այս անգամ ևս չհաջողվեց առիթն օգտագործել և Վրաստանում իրականացնել գունավոր հեղափոխություն: Ավելին, Վրաստանի իշխանությունները կարողացան ոչ միայն կառավարել ծայրահեղ լարված իրավիճակն ու թույլ չտալ զանգվածային բախումներ, այլև հասան օրինագծի վերջնական ընդունման փուլին. չնայած Վրաստանի նախագահի կիրառած վետոյին և Արևմուտքի շեշտակի ճնշումներին՝ 2024 թ. հունիսի 3-ին օրենքը ստորագրեց խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին[47], որն ուժի մեջ մտավ հաջորդ օրը՝ հունիսի 4-ին[48]: Հունիսի 3-ին կառավարության նիստում վարչապետը ևս մեկ անգամ արձագանքեց թափանցիկության մասին օրենքի հետ կապված գործընթացներին և նշեց, որ օրենքի ընդունմամբ հաղթեցին երկրի ինքնիշխանությունն ու անվտանգությունը, պարտվեցին միայն երկրի չարագործները: *«Կային ավելորդ էմոցիաներ, որոնք ընդամենը արհեստական հիմք ունեին, բայց հիմա օրենքը գործում է, և բոլորս պետք է գործենք պրագմատիկ, սառը մտքով, ավելորդ էմոցիաները մի կողմ դնենք: Խոսքը հատկապես վերաբերում է այն մարդկանց, ովքեր փորձում են լիբերալ-ֆաշիստական գործողություններով քողարկել բողոքի տապալման հետևանքով առաջացած հիասթափությունը: Լիբերալ ֆաշիզմը ոչ պակաս վտանգավոր գաղափարախոսություն է, քան դասական ֆաշիզմն ու բոլշևիզմը, որը տարիներ շարունակ արհեստականորեն ներմուծվել է մեր երկրում՝ Վրաստանում՝ անթափանց ֆինանսների միջոցով: Սա բացարձակապես անհամատեղելի է վրացական մշակույթի հետ»,* – նշել է Ի. Կոբախիձեն[49]: Նույն օրը խորհրդարանի նախագահն էլ

լավագույն 50 երկրների շարքում: Հայտնի միջազգային կազմակերպության հրապարակած հետազոտության համաձայն՝ պարզվում է, որ Վրաստանը 4 միավորանոց գնահատման համակարգով վաստակել է 3,5 միավոր: Վրաստանի ՆԳՆ-ից հայտնել են նաև, որ 2012 թ. Վրաստանը Ռուսաստանի և Բելառուսի հետ միասին Եվրոպայի ամենավտանգավոր երկրների եռյակում էր և զբաղեցրել է 99-րդ տեղն աշխարհում, իսկ հաջորդող 11 տարվա ընթացքում Վրաստանը համաշխարհային վարկանիշում առաջադիմել է 49 տեղով և զբաղեցրել 50-րդ տեղն աշխարհում: 2023 թ. Խաղաղ հավաքների ազատության ինդեքսի համաձայն՝ Վրաստանն առաջ է անցել ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Շվեյցարիայից, Լեհաստանից, Հունգարիայից, Բուլղարիայից, Լատվիայից, Հարավային Կորեայից, Սինգապուրից, Թուրքիայից և այլ երկրներից [տե՛ս მშვიდობიანი შეკრების თავისუფლების ინდექსით, საქართველო მსოფლიოს საუკეთესო 50 ქვეყანას შორის დასახელდა. 23.07.2024, https://1tv.ge/news/mshvidobiani-shekrebis-tavisuflebis-indeqsit-saqartvelo-msoflios-sauketeso-50-qveyanas-shoris-dasakhelda/ (բեռնման օրը՝ 20.11.2024)]:

[47] „გამჭვირვალობის შესახებ" კანონი: როდის დაიწყება ორგანიზაციების რეგისტრაცია, 03.06.2024, https://sputnik-georgia.com/20240603/rodis-daiwyeba-specialur-portalze-registracia-288238047.html (բեռնման օրը՝ 20.11.2024).

[48] „უცხოური გავლენის გამჭვირვალობის შესახებ“ კანონი დღეს შევა ძალაში. 04.06.2024, https://1tv.ge/video/uckhouri-gavlenis-gamchvirvalobis-shesakheb-kanoni-dghes-sheva-dzalashi/ (բեռնման օրը՝ 20.11.2024).

[49] საქართველოს მთავრობა, პრემიერ-მინისტრ ირაკლი კობახიძის განცხადებები მთავრობის სხდომაზე. 03.06.2024, https://www.gov.ge/index.php?lang_id=GEO&sec_id=596&info_id=88636 (բեռնման օրը՝ 20.11.2024).

հայտարարեց, որ, «*...սկսած հունիսի 4-ից, 60 օրվա ընթացքում Արդարադատության նախարարությունը կստեղծի էլեկտրոնային պորտալ կազմակերպությունների համար, իսկ 60 օր հետո՝ մեկ ամսվա ընթացքում (այսինքն՝ մինչև սեպտեմբերի սկիզբը), այն կազմակերպությունները, որոնք ունեն ավելի քան 20% արտասահմանյան ֆինանսավորում, պարտավոր կլինեն գրանցվել նշված պորտալում (Արտաքին ուժերի շահերը խթանող կազմակերպությունների ռեգիստրում), իսկ այնուհետև հայտարարագրել 2023 թ. ֆինանսները*»[50]:

Արևմուտքի արձագանքը չուշացավ. ԱՄՆ-ի պետքարտուղարության խոսնակ Մ. Միլլերը հայտարարեց, որ ԱՄՆ-ը հայտարարել է պատժամիջոցների նոր քաղաքականության մասին և դեռ չի հայտարարել անհատական պատժամիջոցների մասին: *«Բայց մենք հստակ ասել ենք, որ չենք վարանի դրանք պարտադրել»,* – հավելել է Մ. Միլլերը[51]: Պաշտոնական Թբիլիսիի արձագանքը վերստին կտրուկ էր. *«Չեմ կարծում, որ վրաց ժողովրդի հետ նման լեզվով խոսելը ինչ-որ մեկի օգտին է... Սխալ է, երբ ռազմավարական գործընկերոջ հետ խոսում ես պատժամիջոցների և սպառնալիքների լեզվով, և երկրորդ՝ վրացական իշխանությունների համար սա ընդհանրապես նշանակություն չունի»,* – ասել է խորհրդարանի նախագահ Շ. Պապուաշվիլին[52]: Այդ օրերին ընդդեմ Վրաստանի իշխանությունների հանդես են եկել նաև Էստոնիայի խորհրդարանականները. պատգամավոր Էրիկ-Նիլս Կրոսը 44 պատգամավորների անունից ներկայացրել է «Ժողովրդավարության ճգնաժամը Վրաստանում» վերտառությամբ հայտարարության նախագիծ Ռիյգիկոգուում կայացած լսումների ժամանակ, որով խորհրդարանականները իշխանություններին խնդրում էին ԵՄ-ին արգելափակել Վրաստանի անդամակցության գործընթացը, քանի դեռ աղմկահարույց օրենքը չեղյալ չի հայտարարվել, առանց վիզայի ռեժիմը սառեցնել, ինչպես նաև պատժամիջոցներ կիրառել «Վրացական երազանքի» հիմնադիր, միլիարդատեր Բ. Իվանիշվիլիի դեմ: Արձագանքելով նախաձեռնությանը՝ Մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման խորհրդարանական կոմիտեի ղեկավար Ռ. Իոնաթամիշվիլին հայտարարել է, որ ոչ ոք իրավունք չունի միջամտելու Վրաստանի ներքին գործերին[53]: Իսկ Վրաստանի վարչապետ Ի. Կոբախիձեն դավաճանություն է

---

[50] Когда в Грузии начнется регистрация "иноагентов"?. 03.06.2024. https://sputnik-georgia.ru/20240603/kogda-v-gruzii-nachnetsya-registratsiya-inoagentov-288235082.html (բեռնման օրը՝ 20.11.2024).

[51] U.S. Department of State, Department Press Briefing – June 3, 2024, https://www.state.gov/briefings/department-press-briefing-june-3-2024/ (բեռնման օրը՝ 20.11.2024).

[52] Папуашвили назвал бессмысленными разговоры о санкциях против Грузии. 04.06.2024, https://sputnik-georgia.ru/20240604/papuashvili-nazval-bessmyslennymi-razgovory-o-sanktsiyakh-protiv-gruzii-288248530.html (բեռնման օրը՝ 20.11.2024).

[53] Не имеют права вмешиваться в дела Грузии – депутат об инициативе эстонских парламентариев.

անվանել ԵՄ-ում երկրի նախկին դեսպան, տվյալ ժամանակ «Չաթեմ հաուս» («Chatham House») բրիտանական վերլուծական կենտրոնի ավագ գիտաշխատող Նատալյա Սաբանաձեի և ԱՄՆ-ի Կոնգրեսում Ջորջ Սորոսի «Բաց հասարակություն–Վրաստան» հիմնադրամի եվրոպական ինտեգրման ծրագրերի ղեկավար Վանո Չխիկվաձեի հայտարարությունները՝ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ընդունման համար Վրաստանի կառավարության ներկայացուցիչների դեմ պատժամիջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին: Վարչապետը վերջիններիս համեմատել է բոլշևիկ հեղափոխական Սերգո Օրջոնիկիձեի հետ[54]: Վրաստանի կողմից *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի ընդունմանը Եվրամիության պատասխանի տարբերակներից մեկն էլ, ըստ Վրաստանում ԵՄ դեսպան Պավել Հերչինսկու, կարող է լինել Վրաստանի քաղաքացիների համար 2017 թ. ներդրված առանց վիզայի ռեժիմի կասեցումը: ԵՄ դեսպանը նաև հայտնել է, որ տարբերակներից մեկով էլ ԵՄ-ն կարող է սահմանափակել նաև տարեկան €100 մլն կազմող ֆինանսական օժանդակությունը[55]:

Օրենքի ուժի մեջ մտնելուց երկու օր անց՝ հունիսի 6-ին, ԱՄՆ-ի պետքարտուղարության խոսնակ Մ. Միլլերը հայտարարեց, որ ԱՄՆ-ը որոշել է վիզային սահմանափակումներ մտցնել Վրաստանի տասնյակ քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների նկատմամբ, ովքեր պատասխանատու են երկրում «*ժողովրդավարությունը խարխլելու*» համար[56]: Վրաստանի փոխվարչապետ, մշակույթի և սպորտի նախարար Թեա Ծուլուկիանիի մեկնաբանությամբ՝ Վրացական խորհրդարանի պատգամավորների, իշխող «Վրացական երազանք» կուսակցության անդամների, իրավապահների և անհատների համար վիզային սահմանափակումների սահմանումը ԱՄՆ-ի հերթական սխալն է ռազմավարական գործընկերոջ հետ հարաբերություններում[57]: Ըստ փոխվարչապետի՝

05.06.2024, https://sputnik-georgia.ru/20240605/ne-imeyut-prava-vmeshivatsya-v-dela-gruzii---deputat-ob-initsiative-estonskikh-parlamentariev-288269650.html (բեռնման օրը՝ 20.11.2024).

[54] ԱՄՆ-ի Կոնգրեսում Հելսինկյան հանձնաժողովի նիստում, որտեղ քննարկվել է Վրաստանում ընդունված *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը, Վրաստանի իշխանություններին ուղղված սուր քննադատությամբ են հանդես եկել կոնգրեսական Ջո Ուիլսոնը, Վրաստանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ուիլյամ Քորթնին և այլք: Նրանք բոլորը խոսել են Վրաստանի՝ արևմտամետ արտաքին քաղաքական կուրսից շրջվելու մասին [տե՛ս Предательство Грузии – премьер о заявлениях в Конгрессе США. 05.06.2024, https://sputnik-georgia.ru/20240605/predatelstvo-gruzii--premer-o-zayavleniyakh-v-kongresse-ssha-288280329.html (բեռնման օրը՝ 20.11.2024)]:

[55] ჰერჩინსკი: ევროკავშირი შეამოწმებს კვლავ მოქმედებს თუ არა საქართველოსთვის სავიზო რეჟიმის ლიბერალიზაციის პირობები. 05.06.2024, https://civil.ge/ka/archives/611634 (բեռնման օրը՝ 20.11.2024).

[56] U.S. Embassy in Georgia, U.S. Department of State, Matthew Miller Press Briefing, June 6, 2024, https://ge.usembassy.gov/u-s-department-of-state-matthew-miller-press-briefing/ (բեռնման օրը՝ 20.11.2024).

[57] Визовые ограничения – очередная ошибка США, сказала вице-премьер Грузии. 07.06.2024, https://sputnik-georgia.ru/20240607/vizovye-ogranicheniya---ocherednaya-oshibka-ssha-skazala-vitse-premer-gruzii--

տվյալ պատժամիջոցներն ուղղված էին իշխանությունների և ժողովրդի միջև անջրպետ ստեղծելուն և խորացնելուն, և երբ դա տեղի ունենա, նման իշխանություններին հեշտ կլինի տապալել[58]: Իշխող «Վրացական երազանք–ժողովրդավարական Վրաստան» կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կ. Կալաձեն էլ հայտարարել է, որ ոչ ոք չի վախենում այդ պատժամիջոցներից, և այն ամենը, ինչ տեղի է ունենում, լուրջ չէ և ստիպում է ժպտալ[59]: Հունիսի 8-ին ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նախագահներ Ջ. Բայդենը և Է. Մակրոնը ամերիկացի առաջնորդի Փարիզ կատարած այցից հետո համատեղ հայտարարությամբ կոչ են արել իշխող «Վրացական երազանքին» հարգել հանրության ցանկությունները և «*վերադառնալ եվրատլանտյան ուղի*»[60]:

«Վրացական երազանք» կուսակցության գործադիր քարտուղար Մամուկա Մդինարաձեն այս առիթով հռետորական հարց է բարձրացրել, թե ինչպե՞ս կարող է *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը խաթարել ժողովրդավարությունը Վրաստանում, մինչդեռ նմանատիպ օրենքներն ամրապնդում են ժողովրդավարությունը ԱՄՆ-ում և Ֆրանսիայում[61]: Վրաստանի վարչապետ Ի. Կոբախիձեն Կանադայի Սենատի՝ արտաքին միջամտությանը հակազդելուն ուղղված օրինագծին հավանություն տալու փաստը լավագույնս օգտագործեց՝ վերստին ի լուր աշխարհի հայտարարելով, որ Վրաստանում *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի դեմ ծավալված արշավը կատարյալ ֆարս էր, և Կանադայի օրինակը դրա ևս մեկ հստակ հաստատումն է[62]:

288308100.html (բեռնման օրը՝ 20.11.2024).

[58] Почему США ввели санкции? Вице-премьер Грузии назвала реальную причину. 07.06.2024, https://sputnik-georgia.ru/20240607/pochemu-ssha-vveli-sanktsii-vitse-premer-gruzii-nazvala-realnuyu-prichinu-288312551.html (բեռնման օրը՝ 20.11.2024).

[59] Вызывает улыбку – Генсек "Грузинской мечты" о санкциях США. 07.06.2024, https://sputnik-georgia.ru/20240607/vyzyvaet-ulybku--gensek-gruzinskoy-mechty-o-sanktsiyakh-ssha-288314841.html (բեռնման օրը՝ 20.11.2024).

[60] The White House, June 08, 2024, French-American Roadmap, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2024/06/08/french-american-roadmap/ (բեռնման օրը՝ 20.11.2024).

[61] Лидер "Грузинской мечты" ответил на критику Байдена и Макрона. 07.06.2024, https://sputnik-georgia.ru/20240610/lider-gruzinskoy-mechty-otvetil-na-kritiku-baydena-i-makrona-288345197.html (բեռնման օրը՝ 20.11.2024).

[62] Կանադայի Սենատը հունիսի 19-ին հավանություն է տվել օրինագծին, որն ուղղված է արտաքին միջամտությանը հակազդելուն: Օրինագիծը պահանջում է գրանցել օտարերկրյա պետությունների և ընկերությունների շահերից ելնելով գործող անձանց դաշնային ռեգիստրում: Միաժամանակ քողարկված և խարդախ գործողությունները կպատժվեն քրեորեն [տե՛ս Кампания против закона об "иноагентах" была фарсом – премьер Грузии. 21.06.2024, https://sputnik-georgia.ru/20240621/kampaniya-protiv-zakona-ob-inoagentakh-bylo-farsom--premer-gruzii-288532 580.html (բեռնման օրը՝ 20.11.2024)]:

Վրաստանի՝ Եվրամիությանն անդամակցելու գործընթացի վերջնական կասեցումը Արևմուտքի կողմից

Հունիսի 24-ին ԵՄ արտաքին գործերի նախարարները երկրորդ անգամ անընդմեջ քննարկեցին Վրաստանում «*անհանգստացնող քաղաքական զարգացումները*», ներառյալ՝ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* արդեն ընդունված օրենքը: Ինչպես հայտարարել է ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը՝ նշված օրենքը և դրա շուրջ բոլոր բացասական զարգացումները Վրաստանին հեռացնում են Եվրամիությունից, և որ այս կարծիքին են ԵՄ 27 երկրներից 26-ը: *«Այսօր [Եվրամիության արտաքին գործերի] նախարարների ճնշող մեծամասնությունը շատ հստակ է ասել, որ Վրաստանի կառավարությունը երկիրը դուրս է բերում Եվրամիությունից: Եվ եթե կառավարությունը չփոխի գործողությունների ուղին, Վրաստանը չի առաջադիմի Եվրամիության իր ճանապարհով»,* – նշել է ԵՄ բարձր ներկայացուցիչը՝ հավելելով, որ ԵՄ արտաքին գործերի նախարարությունների հանդիպման ժամանակ քննարկվել է Վրաստանի կառավարությանը ֆինանսական օգնությունը չեղարկելու հնարավորությունը՝ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* ընդունված օրենքի և պաշտոնյաների կողմից ԵՄ մասին տարածված ապատեղեկատվության պատճառով[63]: Իշխող «Վրացական երազանք» կուսակցության առաջնորդները, հակառակ այս ամենին, պնդեցին, որ Վրաստանը կդառնա ԵՄ անդամ, և դա տեղի կունենա 2030 թվականին: «Վրացական երազանք» խորհրդարանական խմբակցության ղեկավար Մ. Մդինարաձեն հայտարարել է, որ հենց «Վրացական երազանքի» ժամանակ էր, որ Սահմանադրության մեջ հայտնվեց Վրաստանի՝ եվրոպական և եվրատլանտյան կառույցներին ինտեգրման մասին դրույթը[64]: Հունիսի 27-ին «*Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին*» օրենքը քննարկվել է ամենաբարձր մակարդակում՝ Եվրոպական խորհրդում: Կառույցը *«կոչ է անում Վրաստանի իշխանություններին պարզաբանել իրենց մտադրությունները՝ փոխելով առկա գործողությունների ներկայիս ընթացքը, որը վտանգում է Վրաստանի ԵՄ ուղին՝ դե ֆակտո հանգեցնելով անդամակցության գործընթացի դադարեցմանը»*[65]*:* Վրաստանին աջակցող ԵՄ

[63] Delegation of the European Union to Georgia, HR/VP Josep Borrell' comments on Georgia made at the press conference following the EU Foreign Affairs Council. 24.06.2024, https://www.eeas.europa.eu/delegations/georgia/hrvp-josep-borrell%E2%80%99-comments-georgia-made-press-conference-following-eu-foreign-affairs-council_en?s=221 (բեռնման օրը՝ 20.11.2024).

[64] Европейская интеграция глазами властей Грузии и ЕС – мнения расходятся. 24.06.2024, https://sputnik-georgia.ru/ 20240625/evropeyskaya-integratsiya-glazami-vlastey-gruzii-i-es---mneniya-raskhodyatsya-288576431.html (բեռնման օրը՝ 20.11.2024).

[65] Delegation of the European Union to Georgia, Extracts on Georgia from the Conclusions of the European Council. 28.06.2024, https://www.eeas.europa.eu/delegations/georgia/extracts-georgia-conclusions-european-council_

միակ երկիրը Հունգարիան էր, որի վարչապետ Վիկտոր Օրբանը Եվրոպական խորհրդի գագաթնաժողովից առաջ լրագրողներին հայտնել էր. *«Վրաստանում գործերը լավ են ընթանում, ես նկատի ունեմ, որ ԵՄ-ին անդամակցելու ճանապարհը լավ է, կառավարությունը լավ է աշխատում, տնտեսությունը բարելավվում է, կարծում եմ՝ դուք ճիշտ ուղու վրա եք»*[66]: Հուլիսի 9-ին անդրադառնալով այս շրջադարձային քննարկմանն ու ԵՄ շրջանակներում կայացրած որոշումներին՝ Վրաստանում Եվրամիության դեսպան Պավել Հերչինսկին հայտարարեց, որ Վրաստանի՝ ԵՄ-ին անդամակցելու գործընթացը կասեցված է: Դեսպանը նաև հույս էր հայտնել, որ ընտրություններից հետո նորաստեղծ կառավարությունը կրկին լուրջ աշխատանք կսկսի Եվրամիությանն ինտեգրվելու ուղղությամբ: *«Հունիսի 27-ին՝ ուղիղ տասն օր առաջ, Եվրամիության ղեկավարները, Եվրամիության երկրների նախագահներն ու վարչապետները Բրյուսելում շատ կարևոր որոշումներ ընդունեցին: …Շատ ցավով եմ ասում, որ նրանք համաձայնել են դադարեցնել Վրաստանի՝ ԵՄ-ին անդամակցելու գործընթացը:*

…Վրաստանի ներկայիս կառավարության մտադրությունները պարզ չեն Եվրամիության ղեկավարներին. «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» *օրենքն ակնհայտորեն նահանջ է ինը քայլից, իսկ հակաարևմտյան, հակաեվրոպական հռետորաբանությունը նույնպես լիովին անհամատեղելի է Եվրամիությանն անդամակցելու հայտարարված նպատակին: Այնպես որ, ցավոք, առայժմ կասեցված է Վրաստանի՝ Եվրամիությանն անդամակցելու գործընթացը: Սա իսկապես տխուր և հիասթափեցնող է, քանի որ, միևնույն ժամանակ, մենք արագ առաջընթաց ենք գրանցում այլ թեկնածու երկրների հետ: Ինչպես գիտեք, այս որոշման հաջորդ օրը Եվրամիությունը սկսել է Ուկրաինայի և Մոլդովայի հետ անդամակցության բանակցությունները»,* – հայտարարել է ԵՄ դեսպան Պ. Հերչինսկին[67]: Դեսպանը հայտարարել է նաև «*առաջին ծիծեռնակների*» մասին. ԵՄ առաջնորդները որոշել են սառեցնել €30 մլն, որը նախատեսվում էր փոխանցել Վրաստանի պաշտպանության նախարարությանը: Արձագանքելով վերոհիշյալ գումարը սառեցնելու Եվրամիության որոշմանը՝ իշխող կուսակցության պատգամավոր Բեկա

---

en?s=221 (բեռնման օրը՝ 21.11.2024).

[66] Премьер: именно "Грузинская мечта" добилась главных результатов на пути в ЕС. 28.06.2024, https://sputnik-georgia.ru/20240628/premer-imenno-gruzinskaya-mechta-dobilas-glavnykh-rezultatov-na-puti-v-es-288675470.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

[67] პაველ ჰერჩინსკი - საქართველოს ევროკავშირში გაწევრიანების პროცესი შეჩერებულია, ვიმედოვნებ, არჩევნების შემდეგ ახლად შექმნილი მთავრობა დაიწყებს სერიოზულ მუშაობას ინტეგრაციის მიმართულებით. 09.07.2024, https://1tv.ge/news/pavel-herchinski-saqartvelos-evrokavshirshi-gawevrianebis-procesi-shecherebulia-vimedovneb-archevnebis-shemdeg-akhlad-sheqmnili-mtavroba-daiwyebs-seriozul-mushaobas-integraciis-mimartulebit/ (բեռնման օրը՝ 21.11.2024).

Դավիթուլիանին հայտարարել է, որ այն վնասում է Արևմուտքի շահերին, ինչի համար Վրաստանը կարևոր կետ է աշխարհաքաղաքական քարտեզի վրա[68]: Վրաստանի արտգործնախարար Իլյա Դարչիաշվիլին էլ €30 մլն-ի սառեցումը համարել է *«միկրո մակարդակով ընդունված որոշում»*, որը ոչ մի կերպ չի խոչընդոտի Վրաստանի եվրաինտեգրմանը[69]: Խորհրդարանի փոխխոսնակ Գիա Վոլսկու խոսքով էլ, միջոցների վերաուղղորդումը պաշտպանության ոլորտի ֆինանսավորումից դեպի ոչ կառավարական հատված, որը մտադիր չէ պահպանել թափանցիկության սկզբունքը, չի արտացոլում ԵՄ արժեքները, որոնց համար Վրաստանը ձգտում է միավորվել[70]: Ավելի ուշ իշխող «Վրացական երազանքի» գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կ. Կալաձեն հայտարարեց, որ Վրաստանի իշխանությունները կանեն ամեն ինչ, որպեսզի երկրի բանակը ոչնչի կարիք չունենա և չզգա ՊՆ-ի համար նախատեսված €30 մլն-ը սառեցնելու Եվրամիության ղեկավարների որոշման ազդեցությունը[71]: Հիշեցնենք նաև, որ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքն ուժի մեջ մտնելուց մեկ ամիս անց՝ հուլիսի 5-ին, ԱՄՆ-ը հայտարարել էր Վրաստանում նախատեսված «Արժանի գործընկեր–2024» («Noble Partner») զորավարժություններն անորոշ ժամանակով հետաձգելու մասին: Եվրամիության որոշմամբ Վրաստանին միությանն ինտեգրելու գործընթացի կասեցման և ՊՆ-ի համար €30 մլն-ի սառեցման ֆոնին հայտնի դարձավ, որ Վրաստանի կառավարությունը որոշել է պետբյուջեի ծախսային մասն ավելացնել 519 մլն լարիով, որից 100 մլն-ը՝ պաշտպանության նախարարությանը: Մեկնաբանելով Արևմուտքի պատժամիջոցներն ուղղված Վրաստանի դեմ՝ երկրի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին հուլիսի 12-ին հայտարարեց, որ ՆԱՏՕ-ի անդամ երկրները 2008 թ. Օգոստոսյան պատերազմից հետո 6 տարի հրաժարվում էին զենք վաճառել Վրաստանին՝ պատերազմի միջով անցած երկրի

---

[68] Решение ЕС заморозить 30 млн евро для Минобороны Грузии вредит интересам Запада – депутат. 09.07.2024, https://sputnik-georgia.ru/20240709/reshenie-es-zamorozit-30-mln-evro-dlya-minoborony-gruzii-vredit-interesam-zapada--deputat-288927695.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

[69] ილია დარჩიაშვილი - არ გამოვიყენებდი ისეთ მკაცრ შეფასებას, როგორიც ევროკავშირის ელჩმა გააკეთა, ვფიქრობ, ესაა მიკროდონეზე მიღებული გადაწყვეტილება, რაც ევროინტეგრაციისკენ სწრაფვას ვერ შეაფერხებს. 09.07.2024, https://1tv.ge/news/ilia-darchiashvili-ar-gamoviyenebdi-iset-mkacr-shefasebas-rogoric-evrokavshiris-elchma-gaaketa-vfiqrob-es-aris-mikrodoneze-mighebuli-gadawyvetilebebi-da-ver-sheaferkhebs-saqartvelos-swrafvas-evro/ (բեռնման օրը՝ 21.11.2024).

[70] Вице-спикер: решение дать деньги НПО вместо Минобороны Грузии – удар по авторитету ЕС. 09.07.2024, https://sputnik-georgia.ru/20240709/vitse-spiker-reshenie-dat-dengi-npo-vmesto-minoborony-gruzii--udar-po-avtoritetu-es-288936982.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

[71] Грузинская армия не будет нуждаться – Каладзе о решении ЕС заморозить 30 млн евро. 10.07.2024, https://sputnik-georgia.ru/20240710/gruzinskaya-armiya-ne-budet-nuzhdatsya--kaladze-o-reshenii-liderov-es-zamorozit-10-mln-evro-288944715.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

Զինված ուժերին, ինչը, ըստ խորհրդարանի նախագահի, թաքցրել են նախկին իշխող «Միացյալ ազգային շարժում» կուսակցության ներկայացուցիչները[72]:

Իրադարձությունները Վրաստանում՝
ԵՄ անդամակցության գործընթացի կասեցումից հետո

2024 թ. հունիսի 28-ին ՄԱԿ-ի Ժնևի գրասենյակում 36 երկրների մշտական ներկայացուցիչները համատեղ հայտարարություն են տարածել *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի և Վրաստանում առկա իրավիճակի վերաբերյալ: Համատեղ հայտարարության մեջ ստորագրող երկրների ներկայացուցիչները հորդորում են Վրաստանի իշխանություններին չեղյալ համարել օրենքը, քանի որ այն *«լուրջ վտանգ է ներկայացնում Վրաստանում քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության համար»*[73]: Թբիլիսիի արձագանքը նույնն էր. իշխող «Վրացական երազանք–ժողովրդավարական Վրաստան» կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կ. Կալաձեի մեկնաբանությամբ՝ Վրաստանին ոչ մի փաստարկ չի ներկայացվել, թե ինչո՞ւ է *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը խնդրահարույց[74]: Մի քանի օր անց՝ հուլիսի 8-ին, Կ. Կալաձեն կրկին անդրադարձել է թեմային՝ 2021 թ. ստեղծված «Ֆրանկլին ակումբ» հասարակական կազմակերպության օրինակով ցույց տալով, թե որքան կարևոր էր թափանցիկության մասին օրենքի ընդունումը: Առիթը նշյալ ակումբի համահիմնադիր Ալեքսանդր Զիբզիբաձեի հայտարարությունն էր «Պիրվելի» հեռուստաալիքի եթերում, ըստ որի՝ հասարակական կազմակերպությունները հնարավորինս օգնեցին ընդդիմությանը, հիմա նրանց հերթն է և ժամանակն է, որ քաղաքացիական սեկտորն ու ընդդիմությունը գնան նախընտրական քարոզարշավի: *«ՈԿԿ-ները ստեղծվել են որպես քաղաքական կուսակցություններ, թեև նրանք պահպանել են իրենց անվանումը՝ որպես ոչ կառավարական կազմակերպություններ»,* – ասել է Կ. Կալաձեն՝ հարցնելով լրագրողներին, թե պատկերացնո՞ւմ են զարգացած երկիր, որտեղ հասարակական կոչվող կազմակերպությունը կմիջամտի քաղաքական գործընթացներին: Կ.

[72] Члены НАТО отказывались продавать оружие Грузии после войны 2008 года. 12.07.2024, https://sputnik-georgia.ru/20240712/chleny-nato-otkazyvalis-prodavat-oruzhie-gruzii---glava-parlamenta-raskryl-pravdu-288971134.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

[73] Permanent representatives of 36 countries at UN Geneva office issue joint statement on Georgia. 28.06.2024, https://1tv.ge/lang/en/news/permanent-representatives-of-36-countries-at-un-geneva-office-issue-joint-statement-on-georgia/ (բեռնման օրը՝ 21.11.2024).

[74] Нет никаких аргументов – мэр Тбилиси о критике закона об "иноагентах". 29.06.2024, https://sputnik-georgia.ru/20240629/net-nikakikh-argumentov--mer-tbilisi-o-kritike-zakona-ob-inoagentakh-288705628.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

Կալաձեն ավելի է բացել փակագծերը՝ փաստելով, որ Վրաստանի իշխանությունները հաճախ սխալ տեղեկություններ էին ստանում այն մասին, թե իրականում ինչի համար են ՀԿ-ները անցկացնում դասընթացները: *«Օրինակ, երբ մեզ ասում էին, որ պետք է վերապատրաստում անցկացնեն ծանր հիվանդություններ ունեցող երեխաների ծնողների համար, իրականում խոսում էին հեղափոխության մասին: Որպեսզի խուսափեինք այս անհարմարությունից, հենց դրա համար կարևոր էր թափանցիկության մասին օրենքի ընդունումը»,* – նշել է Կ. Կալաձեն[75]:

Հուլիսի 10-ին Վրաստանում ԳԴՀ դեսպան Պիտեր Ֆիշերը ևս հայտարարեց, որ Վրաստանի՝ ԵՄ անդամակցության գործընթացի դադարեցման շրջանակներում Գերմանիան վերանայում է հարաբերությունները Վրաստանի հետ: *«Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ միասին մենք Վրաստանում զարգացման համագործակցության խոշորագույն դոնորներից ենք: Մենք որոշել ենք այս պահին Վրաստանի նկատմամբ նոր պարտավորություններ չստանձնել, հետևաբար Գերմանիայից Վրաստանի նկատմամբ նոր ֆինանսական պարտավորություններ այս պահին չկան»,* – լրագրողների հետ զրույցում նշել է դեսպանը[76]: Հուլիսի 11-ին էլ ընդդիմադիր և անկախ պատգամավոր Թեոնա Ակուբարդիան, վկայակոչելով իր աղբյուրներին, ասել է, որ Վրաստանի պաշտպանության նախարարության համար €30 մլն-ը սառեցնելու ԵՄ առաջնորդների որոշումից հետո Դանիայի իշխանությունները որոշել են սառեցնել 27 միլիոն լարի, որը վրացական բանակը պետք է ստանար չորս տարվա ընթացքում: Նա պնդել է, որ պատճառը Վրաստանում ընդունված *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքն է[77]: Պաշտպանության ֆինանսավորման դադարեցման վերաբերյալ ԱՄՆ-ի և Եվրամիության որոշումները Վրաստանի պաշտպանության նախարար Ի. Չիկովանին անվանել է *«փխուր և անհասկանալի»*, քանի որ վերջին տարիներին, ըստ նրա, Վրաստանը մի շարք հաջող արդյունքների է հասել պաշտպանության և անվտանգության ոլորտում[78]:

---

[75] Каладзе: НПО в Грузии сформировались как политические партии. 08.07.2024, https://sputnik-georgia.ru/20240629/net-nikakikh-argumentov--mer-tbilisi-o-kritike-zakona-ob-inoagentakh-288705628.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

[76] გერმანია საქართველოსთან ურთიერთობების გადახედვას აწარმოებს - პეტერ ფიშერი. 10.07.2024, https://bm.ge/news/germania-saqartvelostan-urtiertobebis-gadakhedvas-atsarmoebs-peter-fisheri (բեռնման օրը՝ 21.11.2024).

[77] Дания тоже приостановит финансирование армии Грузии? Комментарий депутата. 11.07.2024, https://sputnik-georgia.ru/20240711/daniya-tozhe-priostanovit-finansirovanie-armii-gruzii-kommentariy-deputata-288955759.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

[78] Министр обороны назвал печальным решение Запада приостановить помощь грузинской армии. 11.07.2024, https://sputnik-georgia.ru/20240711/ministr-oborony-nazval-pechalnym-reshenie-zapada-priostanovit-pomosch-gruzinskoy-armii--288961268.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

Հայցեր՝ Սահմանադրական դատարան
և ՀԿ–ԶԼՄ-ներին առնչվող նոր բացահայտումները

2024 թ. հուլիսի 11-ին վրացական մամուլը հայտնեց, որ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ երեք հայց է պատրաստվում, որոնք ներկայացվելու են երկրի Սահմանադրական դատարան: Հայցերից մեկը պատրաստվել է մինչև 100 հասարակական կազմակերպությունների կողմից, երկրորդը ներկայացնելու էր Վրաստանի նախագահը, երրորդը՝ ընդդիմադիր կուսակցությունները[79]: Նույն օրը Վրաստանում Ֆրանսիայի դեսպան Շերազ Գասրին հայտարարեց, որ Ֆրանսիան *«որոշել է ժամանակավորապես դադարեցնել իր ուղղակի օգնությունը Վրաստանի բյուջեին և ուժեղացնել օգնությունը քաղաքացիական հասարակությանն ու լրատվամիջոցներին»*[80]*:* Ըստ Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի՝ Ֆրանսիայի այս քայլը ևս մեկ ապացույց է և ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ նման փողերի հետևում կան շահեր, և հենց տեսան, որ Վրաստանի կառավարությունը, հնարավոր է, չի հետապնդում այլ կառավարության կոնկրետ շահեր, ֆինանսավորումն ուղղվեց նրանց, ովքեր հետապնդում են իրենց շահերը[81]: Մեկ օր անց՝ ԱՄՆ-ի պետքարտուղարի քաղաքացիական անվտանգության, ժողովրդավարության և մարդու իրավունքների հարցերով տեղակալ Ուզրա Զեյան, ամփոփելով Վրաստան կատարած այցի արդյունքները, Թբիլիսիում հայտարարեց, որ ԱՄՆ-ը վրաց-ամերիկյան «Արժանի գործընկեր–2024» զորավարժությունների անժամկետ հետաձգումից հետո սառեցրել է Վրաստանին տրամադրվող օգնությունը[82]:

Հուլիսի 15-ին Վրաստանի նախագահի խորհրդարանական քարտուղար Գիորգի Մսխիլաձեն հայտարարեց, որ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին դիմել է Սահմանադրական դատարան՝ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքը կասեցնելու պահանջով: *«Այս օրենքը հակասահմանադրական է. դա հակասում է*

---

[79] В Конституционный суд Грузии готовится три иска против закона об "иноагентах". 11.07.2024, https://sputnik-georgia.ru/20240711/v-konstitutsionnyy-sud-gruzii-govitsya-tri-iska-protiv-zakona-ob-inoagentakh-288966365.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

[80] საფრანგეთის ელჩი - გადავწყვიტეთ, დროებით შევაჩეროთ ჩვენი პირდაპირი დახმარება საქართველოს ბიუჯეტში და დახმარება გავუძლიეროთ სამოქალაქო საზოგადოებასა და მედიას. 11.07.2024, https://1tv.ge/news/safrangetis-elchi-gadavwyvitet-droebit-shevacherot-chveni-pirdapiri-dakhmareba-saqartvelos-biujetshi-da-dakhmareba-gavudzlierot-samoqalaqo-sazogadoebasa-da-medias/ (բեռնման օրը՝ 21.11.2024).

[81] За деньгами всегда стоят интересы – глава парламента Грузии о решении Франции. 12.07.2024, https://sputnik-georgia.ru/20240712/za-dengami-vsegda-stoyat-interesy---glava-parlamenta-gruzii-o-reshenii-frantsii-288972101.html (բեռնման օրը՝ 21.11.2024).

[82] США заморозили помощь Грузии. 12.07.2024, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/21350779. (բեռնման օրը՝ 21.11.2024).

Վրաստանի Սահմանադրության 78-րդ հոդվածին»[83], – ճեպազրույցում ասել է Գ. Մսխիլաձեն[84]: Այդ օրը պարզ դարձավ, որ, բացի մոտ 100 հասարակական կազմակերպություններից և ընդդիմադիր կուսակցություններից, օրենքը վերացնելու համար Սահմանադրական դատարան մտադիր է դիմել նաև Վրաստանի հանրային պաշտպան Լևան Իոսելիանին[85]: Նույն օրը իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը հրապարակեց հասարակական և լրատվական կազմակերպությունների ֆինանսավորման և աշխատանքի թափանցիկության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները:

«Վրացական երազանքն» ուսումնասիրել էր 474 ՀԿ-ների և ԶԼՄ-ների մասին հիմնական տեղեկատվության հասանելիությունը, կազմակերպություններ, որոնք ապրիլին՝ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրինագծի շրջանառումից հետո համատեղ հայտարարություն էին ստորագրել օրինագծի դեմ: Իշխող կուսակցության պատգամավոր Գիվի Միկանաձեն, որը ներկայացրել է ուսումնասիրությունը, հայտնել է, որ նշված կազմակերպությունների 51%-ն ընդհանրապես չունի պաշտոնական կայք, 97%-ը չի հրապարակել տարեկան հաշվետվություն, 89%-ը՝ տվյալ ծրագրերի դրամաշնորհների մասին տվյալները, 80%-ը՝ ծրագրերի/դրամաշնորհների ժամկետները, 70%-ը՝ տվյալներ թիմի մասին, 68%-ը՝ նախագծերի անվանումները (իրականացված և շարունակական), 62%-ը՝ դոնորի անունը/տարբերանշանը: Բոլոր բաղադրիչներին բավարարել է միայն ութ կազմակերպություն[86]: Այսպիսի և բազմաթիվ այլ փաստարկների միջոցով Վրաստանի իշխանությունները շարունակել են պնդել, որ ոչ կառավարական կազմակերպությունները միջամտում են քաղաքականությանը՝ թաքցնելով ֆինանսավորման աղբյուրները և իրենց նպատակները: Իշխանությունների քննադատության թիրախ են դարձել նաև օտարերկրյա

---

[83] Վրաստանի Սահմանադրության 78-րդ հոդվածը, որի վերաբերյալ 2017 թ. հոկտեմբերի 13-ին և 2018 թ. մարտի 23-ին համապատասխանաբար ընդունվել են N1324-რს և N2071-IIს սահմանադրական օրենքները, վերաբերում է եվրոպական և եվրատլանտյան կառույցներում Վրաստանի ինտեգրմանը և շարադրված է այսպես. *«Սահմանադրական մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները՝ ապահովելու Վրաստանի լիարժեք ինտեգրումը Եվրամիությանը և Հյուսիսատլանտյան դաշինքին»* [տե՛ս საქართველოს კონსტიტუცია, მუხლი 78. ევროპულ და ევროატლანტიკურ სტრუქტურებში ინტეგრაცია, 1995 წლის 24 აგვისტო, №786- რს, https://matsne.gov.ge/ka/document/view/30346?publication=36#! (բեռնման օրը՝ 23.11.2024)]:

[84] Президент Грузии направила иск в Конституционный суд против закона об "иноагентах". 15.07.2024, https://sputnik-georgia.ru/20240715/prezident-gruzii-napravila-isk-v-konstitutsionnyy-sud-protiv-zakona-ob-inoagentakh-289004069.html (բեռնման օրը՝ 23.11.2024).

[85] Страсти вокруг закона "об иноагентах": омбудсмен обратится в Конституционный суд Грузии. 15.07.2024, https://sputnik-georgia.ru/20240715/strasti-vokrug-zakona-ob-inoagentakh-ombudsmen-obratitsya-v-konstitutsionnyy-sud-gruzii-289003167.html (բեռնման օրը՝ 23.11.2024).

[86] Насколько прозрачны НПО в Грузии – исследование. 15.07.2024, https://sputnik-georgia.ru/20240715/naskolko-prozrachny-npo-v-gruzii---issledovanie-289004728.html (բեռնման օրը՝ 24.11.2024).

դոնորները: Դա հատկապես ակնառու դարձավ, երբ հուլիսի 16-ին ԵՄ ներկայացուցչությունը հրապարակեց զեկույց, ըստ որի՝ 2019–2024 թվականներին Եվրամիությունը €46,1 մլն է հատկացրել Վրաստանի 170 ոչ կառավարական կազմակերպությունների, ինչը 11 անգամ ավելի է, քան երկրի նախարարություններին և պետական այլ մարմիններին տրվող օգնությունը[87]: Շարունակելով իշխանությունների՝ օտարերկրյա դոնորներին քննադատելու ուղեգիծը, Վրաստանի խորհրդարանի նախագահ Շ. Պապուաշվիլին հայտարարել է, որ վերջիններս ցանկանում են բնակչությունից թաքցնել տեղեկատվությունն առ այն, որ Վրաստանում ընդդիմադիր կուսակցությունները ֆինանսավորվում են ԵՄ բյուջեից՝ շրջանցելով օրենքը, և դա իրագործվում է հասարակական կազմակերպությունների միջոցով: Շ. Պապուաշվիլին իբրև օրինակ մատնանշել է ընդդիմադիր «Դրոա» կուսակցության ֆինանսավորումը[88]: Իշխող ուժի այս փաստարկները, բնականաբար, ժխտվեցին ու չընդունվեցին ՀԿ ոլորտի ներկայացուցիչների կողմից, և հուլիսի 17-ին արդեն 121 հասարակական կազմակերպություն և լրատվամիջոց, ողջունելով Վրաստանի նախագահի և խորհրդարանական ընդդիմության՝ Սահմանադրական դատարան դիմելու որոշումը, հայտարարեց, որ համատեղ հայց է ներկայացնում Սահմանադրական դատարան՝ ընդդեմ *«Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին»* օրենքի[89]: Նույն օրը ընդդիմադիր «Գիրչի» կուսակցության պատգամավոր Ալեքսանդր Ռաքվիաշվիլին հայտարարեց, որ զավեշտական է այն, ինչ անում են ընդդիմությունն ու նախագահը, և որ «Գիրչին» չի պատրաստվում միանալ ընդդիմության՝ Սահմանադրական դատարան ներկայացվելիք հայցին՝ ընդդեմ «*Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին*» օրենքի[90]: Քննադատելով ՀԿ-ների

---

[87] Ոչ կառավարական հատվածի կողմից իրականացվող 47 ծրագրերն ու նախագծերը ԵՄ պատվիրակությունն իր զեկույցում բաժանել է ըստ շուրջ 11 ոլորտի: Վրաստանի իշխող կուսակցության պնդմամբ՝ ԱՄՆ-ի Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) և Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (EED) կողմից հատկացված միջոցները հայտնվում են Վրաստանում քաղաքական կուսակցությունների կողմից ղեկավարվող կեղծ հասարակական կազմակերպությունների հաշիվներում [տե՛ս ევროკავშირმა საქართველოში არასამთავრობო სექტორის დაფინანსების შესახებ ანგარიში გამოაქვეყნა. 16.07.2024, https://sputnik-georgia.com/20240716/evrokavshirma-arasamtavroboebis-dapinansebis-shesaxeb-angarishi-gamoaqvekna-289025609.html (բեռնման օրը՝ 24.11.2024)]:

[88] Что скрывают доноры о финансировании партий и НПО в Грузии?. 22.07.2024, https://sputnik-georgia.ru/20240715/naskolko-prozrachny-npo-v-gruzii---issledovanie-289004728.html (բեռնման օրը՝ 26.11.2024).

[89] რუსეთის კანონის წინააღმდეგ ბრძოლის წინააღმდეგ საკონსტიტუციო სასამართლოში გაგრძელდება. 17.07.2024, https://www.isfed.ge/geo/gantskhadebebi/rusuli-kanonis-tsinaaghmdeg-samartlebrivi-brdzola-sakonstitutsio-sasamartloshi-gagrdzeldeba (բեռնման օրը՝ 24.11.2024).

[90] ალექსანდრე რაქვიაშვილი - საკონსტიტუციო სარჩელში ოპოზიციას არ შევუერთდებით, კომიკურად გამოიყურება ის, რასაც ოპოზიცია და პრეზიდენტი აკეთებენ. 17.07.2024, https://1tv.ge/news/aleqsandre-

այս քայլը՝ խորհրդարանի Մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական ինտեգրման հանձնաժողովի նախագահ Ռատի Իոնաթամիշվիլին հայտարարել է, որ վերջիններս իրականում չեն հարգում ոչ Սահմանադրությունը, ոչ Սահմանադրական դատարանը, ոչ նրա որոշումները: *«…Հենց այս վերաբերմունքի պատճառով է, որ մեր հասարակությունը նրանց համապատասխան գնահատական կտա ընտրությունների ժամանակ: Թեև նրանք ընտրական սուբյեկտներ չեն, բայց տեսնում ենք, որ նրանք նույնպես ներգրավված են նախընտրական քարոզչության մեջ՝ որպես արմատական ընդդիմության ակտիվիստներ»,* – նշել է իշխող «Վրացական երազանքի» այս պատգամավորը[91]: Հուլիսի 29-ին իշխող կուսակցության մեկ այլ պատգամավոր Գիվի Միկանաձեն ներկայացրել է այն կազմակերպությունների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները, որոնք դիմել են Սահմանադրական դատարան: Յոթ չափանիշների հիման վրա կատարված ուսումնասիրության համաձայն՝ դրանց միայն 17%-ը կամ 121 կազմակերպությունից 21-ն է համապատասխանում թափանցիկության նվազագույն չափանիշներին, ինչը, ըստ պատգամավորի, հաստատում է, թե որքան անթափանց ու անմխիթար է այս ոլորտը, և իրականում ովքեր են դիմել ՍԴ[92]:

(Շարունակելի)

raqviashvili-sakonstitucio-sarchelshi-opozicias-ar-shevuertdebit-komikurad-gamoiyureba-is-rasac-opozicia-da-prezidenti-aketeben/ (բեռնման օրը՝ 24.11.2024).

[91] მიუხედავად იმისა, რომ საარჩევნო სუბიექტები არ არიან, ჩართულები არიან წინასაარჩევნო კამპანიაში, როგორც რადიკალური ოპოზიციის აქტივისტები - რატი იონათამიშვილი არასამთავრობო ორგანიზაციებზე. 17.07.2024. https://rustavi2.ge/ka/news/287332 (բեռնման օրը՝ 24.11.2024).

[92] Самые непрозрачные, или Кто требует упразднения закона об "иноагентах" в Грузии? 29.07.2024, https://rustavi2.ge/ka/news/287332 (բեռնման օրը՝ 27.11.2024).